


ՄԹԱ III ՀԱՋԱՐԱՄՅԱԿԻ ԽԵՑԵՂՆԵՐ

Գառնիի մթա III հաղարամյակի նյութերի կոմպլեքսում առանձին տեղ է գրավում խեցեղենը, որն իր բաղմամբ ղուգահեռների հետ ունի նաև անդային, լուկալ առանձնահատկություններ:

Պեղումների ընթացքում հայտնաբերվել են երկու տիպի խեցեղեն՝ փայլեցրած մակերեսով, դարդարուն, բարձրարվեստ խեցեղեն և հասարակ, անփայլ և անդարդ խոհանոցային խեցեղեն:

Հայտնաբերված խեցեղենն ըստ ձևի կարելի է բաժանել հեռավալ խրմբի. կարասներ, թաղտրներ, կճուճներ-դավաթներ, բաժակներ, թասեր,



Նկ. 35. Կարասի բեկոր, գծային և ռելիեֆ-ներձևված դարդանախշով:


բրեղաններ, մինիատյուր կավամաններ, կափարիչներ, օջախներ-կրակարաններ, օջախի հենակներ, պատվանդաններ, ճրագներ:

I. Ամբողջական կառասներ Գառնիում դեռևս չեն հայտնաբերվել: Մենք նրանց ձևի վերաբերյալ պատկերացում ենք կաղմում հայտնաբերված բեկորներով:

Կարասների մեկ տիպն ունի ընդհանուր և ուղղահայաց վիզ, իրանը ուռուցիկ չէ, այլ վղի համեմատ մի փոքր ռելիեֆ-շեշտված:

Նման սև փայլեցրած մակերեսով և դեղնավարդագույն ասառով կառասներից մեկը (երեք բեկորից № 2235/69) վղի հիմքում կանթից աջ սուր


յործիքի օգնությամբ կատարված ուղղադիժ երկրաչափական զարդանախշերի ժապավեն ունի, որը կաղսված է թեք դժիկներով հատված, իրար մեջ հագնող հակադարձ դասավորությամբ եռանկյունաձև ժապավենների շարանից (նկ. 35)։ Վզի հիմքում անցումը դեպի իրանի միջին սասը շեղված է հորիզոնական ներձիված գոտիով։ Կարասի իրանը զարդարված է ոչ խորը, սալույն լույն ակոսով կատարված պարուրաձև վերջավորություն ունեցող ժապավեններով։ Այս կարասի բեկորները հայտնաբերվել են Գառնիի վաղ լրոնդեղարյան միջին շերտում, II տեղամասի 18 ժ քառակուսում (2 մ խորությունից)։



Նկ. 36. Կարասի բեկոր ձվաձև խուլ կանթով։

Ուղղահայաց, ոչ ուռուցիկ իրանով մեկ այլ կարասի բեկոր (№ 1967/11) չեղին փայլեցրած մակերեսով և բաց վարդադույն աստառով, ունի ձվաձև, մեծ, խուլ կանթ, որի վրա երկու կողմից անցքի փոխարեն արված են ձվաձև ներձիկումներ (նկ. 36)։ Հայտնաբերվել է միջին շերտում (2 մ խորությունից, 5 կ քառակուսում)։

Նկարագրված կարասները, ինչպես աեսանք, բնորոշ են Գառնիի վաղ լրոնդեղարյան վերին և միջին շերտերին և նրանց զուգահեռները մեղ դեռևս հայտնի չեն։




Նկ. 37. Կարասի վզի մաս, ուլիկ-ներձիված զարդանախշերով։

Նրկրորդ տիպի նարասներն ունեն գլանաձև, մի փոքր ներձիված վիզ և շեղված, ուռուցիկ փսյու Բոլորի շուրթերը դեպի գուրս են ձկված և եղեր-

փած հորիզոնական անկյունային ժապավենով: Այս կարասների բեկորների մեծ մասը ունեն սև փայլեցրած մակերես, շնամած հանդիպում են նաև օրինակներ պարզագույն մակերեսով (№ 1964/22): Պահպանվել է կտրասների մեկի վզի մասը՝ զարդարված թուլ ներձկումով կառաված պարուրած, վերջավորությամբ ունեցող զարդանախշերի հորինվածքով (№ 2234/134) Հայտնաբերվել է ստորին շերտում (նկ. 37):

Նման կարասներից մեկի վզին բացված է կլոր անցք, հոտրված եզրին պահպանվել է հավանաբար ամրացնելու համար քսված նյութը (№ 2235/74b) Կոտրված կարասը վերականգնելու համար, բացի ամրացնող նյութից, բացել են նաև անցք՝ կոտրված մասերը կարելու, կպցնելու համար: Վերահիշ-



Նկ. 38. Թաղարի բեկոր. կիսազնգածե կանթով:

յալ երկրորդ տիպի կարասները ընդհանուր են Գառնիի վազ ըրոնգեղարյան ընդհանուր շերտերին: Այս կարասներն ունեն բազմաթիվ զուգահեռներ: Նման ամբողջական զարդարուն և անզարդ կարասներ, կարասների բեկորներ (№ 1330/158, № 1618/280, № 1442/123, 124, № 1330/2) և բազմադալար պարույրներով վերջավորվող թռչնազարդ կարաս հայտնաբերվել են Շենգավթում: Կարասների բեկորներ հայտնի են Քոսի ձոթերից (№ 2127/4, 9, 10),


¹ Ս. Ն. Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 179, ադ. LIII, նկ. 40:

Թագավորանիստից (№ 1475/40, 41), Կաոնուտից (№ 1478/2, 3, 4), էլարի բնակատեղիից (№ 161/37, 38, № 127/105—107) և այլն:

Էլարի կարասի բեկորներից սեկր վզի վրա նույնպես ունի կլոր անցք, վերականգնելու, կապելու համար (№ 127/110): Նման անցքեր հանդիպում են ընդհանրապես կարասների, մեծ սափորների վրա և դա բնական է: Նախ կարասներ, մեծ սափորներ պատրաստելը ավելի դժվար էր, քան սանր կալամաններ, բացի այդ, կարասներում, մեծ սափորներում կարելի էր պահել հացահատիկ, այլուր, չոր սննդամթերք, որոնց չէր խանդարի կարասի նման վերանորոգումը:

II. Թաղաբնիկ իրենց ձևով հիշեցնում են երկրորդ տիպի կարասները. միայն ծավալով փոքր են և ցածրադիր: Ունեն դլանաձև, մի փոքր ներճրկված վիզ, ուռուցիկ փոր, դեպի ցած նեղացող ներքնամաս, որն ավարտվում է փոքր հատակով: Շուրթերը դեպի վեր են ճկված և եզերված անկյունային նեղ ժապավենով: Վզի հիմքում ունեն կիսադնդտձև կանթեր:

Ըսա կատարման որակի, այս թաղարների երկու տիպի են. հասարակ վարդադույն խեցիով, վառ հունցած, ավազի խոշոր հատիկներով: անփայլ թաղարներ և սև փայլեցրած, լավ մշակված մակերեսով թաղարներ: Այս առանձնահատկություններն անշուշտ պայմանավորված են նրանց օդադործման նպատակով:



Նկ. 39. Կալամանի բեկոր, Եփեսոսի թաղաբնակատեղի:

Հասարակ, վարդադույն թաղարներից մեկը (№ 2235/63) հայանաբերվել է 1962 թ. վերին շերտի կրակարանի կոմպլեքսի հետ: Այս թաղարը հավանաբար օդադործվել է ճաշ եփելու, հեղուկ ապքացնելու համար: Թերևս նրա մեջ պահել են կրակարանից հանված որոշան մոխիրը:

Հայանաբերված մյուս թաղարների բեկորները ունեն սև փայլեցրած, կոկած մակերես, վարդադույն աստառ: Որոշ բեկորներ վզի հիմքում ունեն ձվաձև (№ 1965/8a), կիսադնդաձև կանթ (նկ. 38, № 1864/11a), կամ վզի միջին մասում՝ ձվաձև փոսիկ (№ 2234/152): Նկարագրված թաղարները ընդհանուր են Գառնիի բոլոր շերտերին:

Նման թաղարների մասեր սև փայլեցրած մակերեսով, դարձարված փոսիկներով և ակոսիկներով հայտնաբերվել են նաև Էլարում (№ 127/166, 472, № 2245/30, 32), Ակունքում (№ 2258/632): Մալաքլուում¹, Արճեշում² և այլուր:

III. Կնուճ-գավաթները տարբեր չափերի են՝ մեծ, միջին և փոքր: Ձևով կրկնում են վերը նկարագրված թաղարները: Գերադանցապես հոմա-

¹ Б. А. Куфтин, Урартский «колумбарий»... стр. 74, рис. 34.

² С. А. Burney, Eastern Anatolia in the Chalcolithic and Early Bronze Age, As. v. VIII, 1958, p. 185, fig. 88—91.

սանի են, լայն, ներձկված գլանաձև վզով, ուռուցիկ փորով, երկկոնիկ, դեպի ցած նեղացող ներքնամասով և փոքրիկ հատակով: Շուրթը նուրբ, դուրս ձկված և եղբրված նեղ ժապավենով:

Շնորհիվ կառուցվածքային որոշ տարրերով թյունների և զարդանախշման սկզբունքների, դրանք ըաժանվում են հաճախ խմբերի. 1. շեշտված անցումներով կճուճ-գավաթներ, որոնց վզի հիմքում անցումը դեպի ուռուցիկ փորը շեշտված է խորաքանդակ հորիզոնական դռախով, իսկ ուռու-



Նկ. 40. Կավաման, պարուրաձև վերջավորություններ ունեցող զարդերով:

ցիկ փորը երկկոնիկ նեղացող ներքնամասի հետ միանում է հորիզոնական սուր եզրով:

Ըստ զարդանախշման, այս կճուճ-գավաթները ևս ըաժանվում են ենթախմբերի.

ա) կճուճ-գավաթներ, որոնց ուռուցիկ փորը ռելիեֆ զարդանախշեր ունի միայն մեկ երեսից:

Սև փայլեցրած, մուգ դարչնագույն ասառով, հասաախեցի կճուճներից մեկի ուռուցիկ փորի մասն է պահպանվել՝ վրան ռելիեֆ, եռանկյունաձև իրանով երկգլխասի թռչունի զարդանկար (Նկ. 74, № 2234/123):

Գառնիում հայտնարերված սև փայլեցրած մակերեսով և մոխրագույն աստառով մեկ այլ կճուճի ռեկորի վրա պահպանվել են ռելիեֆ, իրար մեջ հաղնող քառանկյունաձև շրջանակների մասերը (Նկ. 39, № 2234/109a):

Նման ռելիեֆ զարդանախշեր ունի Քոսի-ճոթերի խեցեղենը¹, Արժնկարադի՝ 6,5 մ և 8 մ խորությունից հայտնարերված խեցեղենը²:

Վերոհիշյալ ռելիեֆ, տարրեր զարդանախշերով երկու կճուճների ռեկորներն էլ հայտնարերվել են Գառնիի վաղ բրոնզեդարյան միջին շերտում:

Մեծ արվեստով են կատարված Գառնիում հայտնարերված սև փայլեց-

¹ Գտնվում է Կիրովականի ռազմազինական թանգարանում:

² H. Koşay, K. Turfan, Erzurum-Karaz Kazısı raporu. TTK, Belleten, XXIII, 1959. № 21, տե՛ս շերտագրական աղյուսակ, էջ 404, 391, նկ a 170:


րած, մոխրապուշ և դարչնագույն երկու տարբեր կճուճների ուղեֆ զարդանախշերը, որոնցով հավանաբար սլատկերված են խուլաղուխ շքասեղներ (նկ. 73, 1964 թ., № 28 և 1965 թ. № 90):

բ) կճուճ-դավաթներ, որոնց ուռուցիկ փորին արված են ուղեֆ-ներ՝ ճրկված, լայն և նեղ ակոսով կատարված զարդանախշեր:

Միջին շերտում հայտնաբերված սե փայլեցրած կճուճներից մեկի ուռու-



Նկ. 41. Կճուճ, ուղեֆ ներ-
ճրկված զարդերով:



Նկ. 42. Գավաթ, քառանկյունաձև
զարդերով:


ցիկ փորը զարդարված է սշ խորը ուղեֆ-ներճրկված, պարուրաձև վերջավորություն ունեցող բարդ կոմպոզիցիայով (նկ. 40, № 2234/138):

Այս խմբի կճուճների մեծամասնությունը հորիզոնական խորաքանդակ դոսի ունեն ոչ միայն վղի հիմքում, այլ նաև վղի միջին մասում: Նման կճուճներից մեկի ուռուցիկ փորի վրա անկյուն կաղմող պարուրաձև վերջավորող դիզապ ժապավեններով առաջացած կոմպոզիցիոն կենարոնը զարդարված է բաղմաղալար պարույրով (նկ. 41, 1965 թ. № 9): Կճուճը հայտնաբերվել է միջին շերտում, իսկ վերին շերտում դանված մեկ այլ գավաթի մասի վրա պահպանվել են դիզապ ժապավեններով առաջացած քառանկյունաձև դաշակ, որոնք ավարտվում են պարուրաձև վերջավորություններով (նկ. 42, 1965 թ., № 22): Նման զարդանախշերով դավաթների բաղմաթիվ բեկորներ հայտնաբերվել են վերին և միջին շերտում (№ 2234/144a, 133b, № 1964/49a, 41), որոնցից մի մասը հալոց-կթխանների դեր են կատարել (№ 2234/137a, b, c, d, № 2234/144):


Կճուճ-դավաթների այս խումբը չնայած ունի զարդանախշերի կտաարման իր տեղալին յուրահատկությունները, արված է ավելի խիստ ոճով, մի քիչ շոր, ունի ուղիղ անկյուններ, սակայն զարդամոտիվներով ավելի շուտ հարում է խեցեղենի Կիրովականի խմբին: Նման կոմպոզիցիաներով է զարդարված Քոռի-ճոթերի և Մաշաոցի բլուրի դավաթների ուռուցիկ փորը: Սակայն ույստեղ անցումները սահուն են, ձկուն, ավելի կլորացող անկյուններով: Այսպիսով, չնայած զարդամոտիվների ընդհանուր բնույթին, յուրաքանչյուրն ունի կատարման իր տեղական հատկանիշը:

դ) Միջին և վերին շերտերում հայտնաբերված դավաթների մեկ այլ խմբին բնորոշ է վղի հիմքի զարդանախշում՝ դժալին երկրաչափական մոտիվների ժապավենով, իսկ ուռուցիկ իրանը՝ ոչ խորը, կատարված ուղեֆ-

ներճկված պարուրաձև վերջավորվող կոմպոզիցիայով (նկ. 43, 44, № 2234/125b, 109b): Գավաթների այս խումբը իր զուգահեռներն ունի նույնպես Կիրովականի խեցեղենում՝ Մաշտոցի բլուրի, Քոսի-Շոթերի, Արզվիի, Նրանք նման են ոչ միայն զարդանախշերի բնույթով, այլև կաաարման եզանակով, դեղին փայլեցրած մակերեսով և այլն:




Նկ. 43. Գավաթի մաս, գծային և ուլիեֆ ներճկված զարդանախշերով:



Նկ. 44. Գավաթի մաս, վղի հիմքում գծային երկրաչափական զարդանախշեր:

Նկատի ունենալով ուսումնասիրվող ժամանակաշրջանում փոխանակալին սերա կապերի առկայությունը, կարելի է ենթադրել, որ այս գավաթներն ունեն կիրովականյան ծագում:

դ) Կճուճ-գավաթներ, որոնց վիզը զարդարված է ուղղադիծ երկրաչափական զարդանախշերի ժապավեններով, իսկ ուռուցիկ իրանը ուլիեֆ-ներճկված զարդանախշերով: Նման մի շարք բեկորներ են հայտնաբերվել (1967 թ. № 29a, b), որոնցից մեկի վզին կան ուղղադիծ երկրաչափական նուրբ գծանախշերի նեղ և լայն ժապավեններ (նկ. 31, № 2234/136): Այդ ժապավեններից մեկից մյուսի անցումը շեշտված է հորիզոնական խորաքանդակ դոսիով: Իրանի ուսերը զարդարված են ուլիեֆ-ներճկված ռազմա-գալար պարուրով, որի վրա աչ կողմից, վերևից ճառագայթաձև ակոսներ են տարածվում: Այս կճուճը հայտնաբերվել է միջին շերտում և կթխանի դեր է կատարել, ներսում այն ունի մետաղի մնացորդներ:



Նկ. 45. Կավամանի մաս, ծառի գծային պատկերով:


Կճուճ-գավաթների այս խումբը թե՛ կատարման եզանակով, թե՛ զարդանախշման սկզբունքներով, և թե՛ զարդամոտիվների բնույթով իր զուգահեռներն ունի Շենդավթի խեցեղենում, որանգ այն հայանի է ռազմաթիվ օրինակներով (№ 1330/103, 106, 107, 296, № 1442/130, № 1618/103, 232):

Գառնիում հայտնաբերված մեկ այլ կճուճի վզի մոտ շուրթի ասկ անկյուններ կազմող երկրաչափական զարդանախշերի ժապավենից ցած պատկերված է ծառ՝ ճյուղերով հանդերձ (նկ. 45, 1965 թ., № 90): Այն միակ օրինակն է վաղ բրոնզեդարյան խեցեղենում, բնորոշ է միայն Գառնիին և

իր դուղահենները դեռես չունի: Զարգանախշերը գծային են և կատարված ութն սեղմելու, փորելու, այլ փայլաներկը նեղացնելու եղանակով:


Ե) Գավաթներ, որոնց ուռուցիկ փորը զարգարված է նեղ գծային զարդանախշերով: Նրանց սիրված ստիվներն են եռանկյունաձև իրանով թռչուններ (նկ. 46, № 2235/103), շ-ի նման զարգանախշեր (նկ. 47, № 2235/38c):

« ալին:



Նկ. 46. Խեցեղենի բեկորներ, թռչունի և այլ գծային պատկերներով:

դ) Գառնիի վաղ բրոնզեդարյան մշակույթն արաակարգ հարուստ է ներկված փոսիկներով զարդարված կճուճ-գավաթներով: Նրանց մի մասը չնայած նույնպես եռանկյունի են, սակայն ունեն կառուցվածքային նրբին տարբերություններ՝ նախորդների համեմատ ավելի նրբախեցի են, պատրաստված լավ մշակված և լավ թրծած կավից, շուրթերը նուրբ են և ավելի շեշտված են դուրս ձգվում, քան նախորդներինը: Չնայած ձեռքով են պատրաստված, սակայն կատարման աեսակետից կաաարելույթյան են հասցված:



Ունեն շուրթից սկսվող և արաաքինից երկթեք կանթ, զարգարված են գերազանցությամբ ձվաձև մեծ փոսիկներով:

Նկ. 47. Կավաթաձև բեկոր գծային զարդանախշերով:


Նման մի կճուճ հայտնաբերվել է վերին շերտի օջախի կոմպլեքսի հեա (նկ. 48, № 2235/66): Կանթի տակ արված է ձվաձև մեծ փոսիկ: Իրանի ուռուցիկ մասում, կանթի հակառակ կողմում, ճիշտ նման դուլգ ձվաձև փոսիկներ են արված: Մեկ այլ կճուճի (№ 2235/136) վրի հիմքում պահպանվել է կանթի հետքը, որի տակ զարձալ ձվաձև մեծ փոսիկ (աղ. X):

Նման կճուճիկ-գավաթների մի շարք բեկորներ են հայտնաբերվել (№ 2235/43a, 70b, 129, 140a, b, 142, № 2234/113, 153a), որոնց մեջ հատկանշական է ձվաձև փոսիկով և թեք ակոսիկ—«բեղիկով» զարգարվածը (նկ. 49, № 2234/137):


Չնայած փոսիկներով և «բեղիկներով» զարգարված նման կճուճներ հայտնաբերվել են նաև էլարում (№ 2246/42)¹, Քաղսիում (№ 1900/30), Շենգավիթում (№ 1330/239), Ֆրանկանոցում (№ 589/, սակայն յուրաքանչյուրն իր մանրամասներով տարբերակվում է և ունի իր աեղտեան հատկանիշը:

¹ Б. А. Куфтин, Урартский «колумбарий»... стр. 102—103, рис. 56.

Գառնիի կճում-զավաթների վերոհիշյալ խումբն էլ ունի իր ոգույն. տեղական կայուն հաականիչները, որոնք արտահայտվում են կանթի ձևով. փոսիկների ստացման եղանակով, կճումների մասերի համաչափության, ձեռնադրանակով և այլն:



Նկ. 48. Կճում. սև փայլեցրած, փոսիկադարձ:




Նկ. 49. Սև փայլեցրած դավաթ փոսիկով և «բեղիկով» զարդարված:

Գառնիում հայտնաբերվել են և այլ եռմասանի զավաթներ՝ շեշտված անցումներով, որոնց վզի հիմքը զարդարված է ուռուցիկ ելուստով (նկ. 50,

№ 2235/141), կամ դավաթներ վզի հիմքում կիսազնգաձև կանթ (նկ. 13. № 1965/5, № 1967/10, № 1964/14Վ, № 2235/129): նման դավաթները բնորոշ են նաև այլ հուշարձաններին:

2. Սառնոն անցումներով կճուճ-դավաթներ:


Նախորդ խմբի հառնաա նրանք կառուցվածքային որոշ փոփոխություններ են կրում: Նախ վիզը այնքան ուժեղ ներկված չէ և հասարյա ուղղահայաց է կանգնած իրանի վրա, փորը կլոր է և սվարավում է փոքրիկ հատակով: Զարգարված են դերազանցապես փոքրիկ և կլոր փոսիկներով: Չնայած այս խումբն իր հաականիշներով հարում է էլարի դավաթներին, սակայն նրա մի մասը թերևս լրիվ էլարյան չէ. ունի նրբին արբրություններ, այդ իսկ պատճառով բաժանվում է ենթախմբերի՝ Գառնիի և էլարի փուլերի:



Գառնիին բնորոշ դավաթների կան- նկ. 50. Սև փայլեցրած դավաթ՝ ելու- թերը նույնպես սկսվում են շուրթից, սակայն էլարյանի նման շուրթի հեա եռանկյունաձև հարթակ չեն կաղմում, ժապավենաձև են, միջին մասում սեղմվում են, իսկ ծայրամասերում լայնանում: Նրանց բնորոշ է կանթի տակ կլոր փոսիկ: Գառնիի դավաթները արաակարգ ուռուցիկ են և շնայած գեպի սաորին մասը անցումը սահուն է կատարվում, սակայն կոնաձև նեղացող մասը կարճ է և ուժեղ թեքված:

Նման կճուճ-դավաթների բաղմաթիվ օրինակներ են հայտնարերվել Գառնիում: Սե փայլեցրած մակերեսով դավաթներից մեկը, վերը նկարա- պրված շուրթից սկսվող կանթով և նրա հակառակ կողմում ուռուցիկ փորին կլոր փոսիկով (նկ. 28, № 2234/149), հայտնարերվել է Գառնիի սաորին շերտում, կոթառով սեայաձև կացնի կաղապարի հետ: Աստաորը նույնպես սև է, իսկ շուրթը ներսից հարթեցրած, գորշագույն է և թեթև փայլեցրած:

Կանթի տակ կլոր փոսիկներով սև փայլեցրած խեցեղենի բաղմաթիվ բեկորներ են հայտնարերվել, ոմանց շուրթը ներսից մուգ-շագանակագույն




Նկ. 51. Գավաթ, րուրթից սկսվող կանթով:

է. աստասը մոխրագույն (№ 1965/6a, b), դեղին (նկ. 48, № 2176/54, № 2234/153b), մուգ-շագանակագույն (№ 1965/8b), սև (№ 2176/89, № 2235/75): ատա են նաև դավաթների մասերը շուրթից սկսվող ժապավենաձև կանթե-

րով (1964/14e, 15a, 33, 50, № 1967/169, № 2176/27, № 2234/142f, 153. № 2235/138):

Մեծ վարպետությանը է կատարված մեկ այլ գավաթ (№ 2176/29)՝ դեղնա-նարնջագույն փայլեցրած մակերեսով, լավ թրծած ոսկրանոման խեցիով և գեղին աստառով: Հայանարերվել է նաև սև փայլեցրած մակերեսով և սև տասառով մեկ ամրողչական փոքր գավաթ, շուրթից սկսվող ժապավենաձև կանթով (նկ. 51, № 1967/8): Կանթի տակ կլոր փոսիկով մի գավաթ հայտնի է նաև էլարից (№ 2245/26):




Նկ. 52. Գավաթի մաս, կանթի վերևում փոսիկ:

Այս ենթախումբը լրիվ երկնում է էլարին ընդող գավաթները: Նրբախեցի է, շուրթը օգեղված նուրբ և նեղ ժապավենով, վիզը ուղղահայաց շատ թույլ ներձկումով, փոքր կլոր է, սակայն նախորդի նման ոչ շատ ուռուղիկ, այն գեպի ցած աստիճանարար, սահուն անցումով սավառվում է նույնպես փոքրիկ ներձկված հասակով: Կանթը սկսվում է շուրթից, նրա հետ կաղմելով եռանկյունաձև հարթակ, որի կենտրոնում երբեմն լինում է ներձկված փոսիկ: Կանթն արտաքինից երկթեք է և հիմքում ունի գարձյալ ներձկված փոսիկ:

Նկարագրված գավաթների մի շարք օրինակներ են հայտնաբերվել (նկ. 52, 53, № 2234/104, 153b, 152c, № 1964/7, 18 № 2235/9, 48c 138, 1965 թ. № 18):

Այս գավաթներն, ինչպես վերը նշվեց, իրենց ղուգահեռներն ունեն էլարի գամրարանային խեցեղենում (№ 2245/26, 34): Աղթամիրում (Ոսկեվազ) նույնպես հայտնաբերվել է գավաթի մաս, որի շուրթից սկսվող երկթեք կանթի եռանկյունաձև հարթակը ղարգարված է կլոր փոսիկով (№ 2247/9): էլարի ախլի գավաթներ հայտնաբերվել են նաև Մուխունաթ-Յափայում (№1439/19), Արևիկում (Արմավիրի Մոխրարլուր, 1963 թ., № 9a, b), Մալաթլուում¹, Նախիջևանի Քյուլ-Յափայում², Աղստևի հովաի Բարու-Դեմիրի-



Նկ. 53. Գավաթի մաս. կանթի տակ փոսիկ:

¹ Б. А. Куфтин, Ураратский «колумбарий»... стр. 76, рис. 34.


² О. А. Абибуллаев, Археологические раскопки в Кюль-тепе, Баку, 1959, табл. 29.

չում՝ Արճեշում՝, Վանա լճի հարավային մասում՝ Հալքում (Իրեմիր)՝, Դեռ-թեփեի «K» շերտում՝, Նրանց ղուգահեռները կարելի է անսնել Թոեղ-րում (Թրիալեթի)՝ Բարմաքսիդի խճուղու և Տաշ-Քաշ գյուղի դասարաններից հայտնարեքված նյութերում, Օղնիի դասարանային նյութերում, Զգուդ-րիս-ղվերգայում (Վրաստանի վերոհիշյալ գավաթները զարդարված են ելուստներ-խուլ-կանթերով)։ Այս գավաթները հասել են մինչև Կիրրեթ-Կերակ՝։

IV. Բաժակներ, որոնք ըստ ձևի բաժանվում են մի շարք խմբերի.

1. Կլորաբաժակի գլանաձև բաժակ, միջին մասում նեղացող, գեպի վեր և վեր լայնացող իրանով (նկ. 54, № 22 35/77)։ Պահպանվել է մի մասը (բարձրությունը 0,15, հաակի արամագիծը՝ 0,06 մ), շուրթն արաքինից նեղ ժապավենով եղերված։ Հատակի մասը բավականին հասա է, մի փոքր ներճկված և ավարտվում է կլորացող դուրս շեշտված նստուկով։ Հայտնարեքվել է միջին շերտում, իր ղուգահեռներն ունի Շենդավթում № 1618/13, 1442/82, 127։

2. Կլորացող իրանով բաժակ, մի փոքր ուղիղ, լայնադիր ժապավենաձև շուրթով, որը դեպի ներս է ճկված (նկ. 55 № 2234/146)։ Ունի ուժեղ, դեպի ցած նեղացող ներքնամաս, որը կլորացող իրանի հետ անցման անգում հորիզոնական սուր եզր է առաջացնում։ Շուրթից ուսերի անցումը շեշտված է հորիզոնական ներճկված դոտիով։ Իրանի կենտրոնում ունի կիսադնդաձև կանթ, որը մի փոքր գեպի դուրս է ձգված և արաքինից երկթեք է։ Նրա երկու կողմում վերին և ներքին մասում արված են երեքական ներճկված հատիկներ։ Իրանի միջին մասում ունի լայնակոս, բայց ոչ խորը զարդա-նախշեր։ Բաժակն արտաքինից մոխրագույն է և ուժեղ փայլեցրած, իսկ աս-



Նկ. 54. Բաժակի մաս, շեշտված նստուկով.

¹ Г. Исмаилов, Автореферат, шг. 1.

² С. Burney, шг. шг., էջ 183, նկ. 77, 78, 81, 83, 86.

³ Նույն տեղում, էջ 181, նկ. 36, 37.

⁴ T. Burton-Brown, шг. шг., шг. III, նկ. 958, 30, 39, шг. VI, նկ. 449. W. Lamb, The culture of North East Anatolia and its Neighbours, AS, V-IV, 1954, t. II fig. 1.

⁵ Б. А. Куфтин, Археологические раскопки в Трналет, стр. 116—117 рис. 126.


⁶ Վրաստանի պետական թանգարան. № 267.

⁷ Б. А. Куфтин, К проблеме энеолита внутренней Картли и Юго-Осетии, Вестник Гос. музея Грузии, вып. XIVB, Тб., 1947, стр. 74, рис. 72.

⁸ S. Hood. Excavations at Tabara el-Akrad, AS, v. I, 1951, шг. XII fig. 1.

տառը կաթնադույն, անփայլ (պահպանված մասի բարձրությունը 10 սմ, բերանի տրամագիծը 10,5 սմ, իրանի ամենալայն մասի տրամագիծը՝ 13,5 սմ, շուրթի ժապավենի լայնությունը 1,5 սմ): Նման բաժակի մաս հայտնաբերվել է Շենդավթում (№ 1618/96):

Գառնիի բաժակը հայտնաբերվել է երկրորդ շերտում: Նրա ներքին մասը կարծես է և թերի, սալային ոչ թե նեղանալով է ավարտվում, այլ դարձյալ



Նկ. 55. Բաժակի մաս, Գառնիի ֆ-նեղակված դարձանալով:

լայնանում է դեպի դուրս և հավանաբար նախորդ բաժակի նման ավարտվում է շեղված, լայնադիր նստուկով:

Նման հատակները բավականին արխաիկ են և ընդունչ մթնա V—IV հազ., էնեոլիթյան բնակատեղիների խեցեղենին: Հայտնաբերվել են Նախիջևանի Քյուլ-թափայի I շերտում¹, Աղստևի հովտի Թոյրե-թեփե բնակատեղիում², Հայկական լեռնաշխարհի հյուսիսում՝ Շահումյան (Շուկավերի) դյուղի շրջակայքի մի շարք բնակատեղիներում՝ Ազնիվ բլուրում (Շուկավերիս-գորա)³, քանդված բլուրում (Դանդրեուկիս-գորա)⁴, Սանջի-թեփեում (Իմիրիս-գորա)⁵, Բոլնիսի շրջանում՝ Արուխտի բնակատեղիում⁶ և այլն:

Կրունկաձև նստուկով Գառնիի տիպի բաժակի մաս հայտնաբերվել է

Թիոնեթի շրջանի (Սիմոնյանի ձոր) Սիոնի դյուղի հրվանդանաձև բնակատեղիում (ՎՊԹ. № 1—62—554)⁷: Ընդհանրապես այս բնակատեղիի նյութերը մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Վարդագույն և շեկ խեցեղենն ունի դրկու հատկություն, որն ապացուցում է նրանց բաց կրակի տալի թրծված լինելը: Այն ունի էնեոլիթից վաղ-բրոնզի անցման հատկանիշներ՝ բարձր խողովակաձև սիլ. որի շուրթերը դուրս են ճկված և կլորանում են, (ՎՊԹ. № 1—62—552, 1—62—552, 554, 555, 556), սակայն վաղ բրոնզի խեցեղենի նման՝ անկյունային, ձևավորված ժապավեն չունեն: Արդեն երևան է դալիս փայլեցրած մակերեսով խեցեղենը, որի թիվը դեռևս շատ է: Ունեն ժապավենաձև կանթ, որն իր ձևով արդեն մոտ է կիսաղնդաձև կանթերին (ՎՊԹ. № 1—62—549): Հանդիպում են նաև ոչ մեծ թվով խորաքանդակ լայնակուր

¹ Օ. А. Абибуллаев, *Զեմ. աշխ.* աղ. 19, 20—21, 23—24:

² Д. Н. Рустамов, Разведочные раскопки в Тонре-тепе, Материальная культура Азербайджана, т. VI, Б., 1965, էջ 29, աղ. 1, նկ. 1,4.

³ О. Джапаридзе, А. Джавахишвили, Результаты Квемо-Картлинской археологической экспедиции 1965—1966 гг. (Мацнэ). Вестник отд. общ. наук АН СССР. 1967. № 3, стр. 298.

⁴ Նույն տեղում, աղ. XIV:

⁵ Պեղումները Օ. Զափարիսի և Ա. Զավախիշվիլու, *Նյութերը հրատարակված չեն*:


⁶ Պեղումները Տ. Զուրիկիշվիլու, *Նյութերը հրատարակված չեն*:

⁷ Պեղումները Ոսմիկ Ոսմիշվիլու, 1963 թ., *Նյութերը հրատարակված չեն*:

ժապավեններով (ՎՊԹ. № 1—62—537, 538) և ունենալ ներկված դարդա-
նախշերով խեցեղենի բեկորներ (ՎՊԹ. № 1—62—536), էնեոլիթից վաղ
բրոնզի անցման նույնանման հատկանիշներ ունի նաև Ծոփի և Աբելիա
(Սաղախուից 7 կմ դեպի Արևմուտք) գյուղերի¹, ինչպես և Թեթրիժարուի
(Թրիխսիից 70 կմ հարավ) բնակաանդիների էնեոլիթյան խեցեղենը²։



Նկ. 56. Բաժակի մաս, կտցաձև կախված շուրթով։



Նկ. 57. Բաժակի մաս, կտցաձև կախված շուրթով։

Ամենայն հավանականությամբ խեցեղենի վերահիշյալ իմբերը սփռված
յուդիկ օղակ են կազմում էնեոլիթի և վաղ բրոնզի միջև։


¹ Պեղումները Տ. Չուրիսիշվիլու, նյութերը հրատարակված չեն։

² Պեղումները Գ. Գորեշիշվիլու, 1956—58 թթ., նյութերը հրատարակված չեն, երբև
շնորհակալություն եմ հայտնում վերը հիշատակած վրացի հնագետներին, իրենց հրատարա-
կած նյութերի հետ ծանոթացնելու համար։

Վերը ներկայացված կրնկաձև նստուկով խեցեղեն ընորոշ է նաև Գեոյ-
թեփեի «M» շերտին¹: Սակավ հանդիպում է նաև «K» շերտում²:

3. Բուրակ իրանով բաժակներ դուրս ձկված և կլորացող շուրթերով,
որանի միջին մասում ունեն կիսադնդաձև կանթ: Բաժակների շուրթերը
եռանկյունաձև ելուստով, կամ, ալսպես ասած, կացաձև ցած են կախվում:

Նման երկու սե փայլեցրած բաժակների մասեր են հայտնաբերվել: Մե-
կի վզի վրա երկու կողմից պահպանվել են ինչ-որ քառանկյունաձև խորա-
քանդակ շրջանակների մասեր (նկ. 56, № 2234/142C), իսկ մյուսի վզի հիմ-



Նկ. 56. Կացաձև կախված շուրթերով կավամանների բեկորներ:

քում և ուսերին արված են խորաքանդակ հորիզոնական դռախներ (նկ. 57,
№ 2235/70ա): Այս բաժակների ստորին մասերը չեն պահպանվել: Երկուսն
էլ հայտնաբերվել են երկրորդ շերտում:

Շուրթից կախված կաուց ունեն Գառնիի նաև այլ ախյի կավամանները
(նկ. 58, № 1964/50b, 2234/162b, 2235/26b):

Նման ելուստով կավամանի բեկոր հայտնաբերվել է նաև Շենգավիթում
(№ 1618/152): Շուրթից կախված եռանկյունաձև ելուստները բավականին
լայն տարածում ունեն: Հայտնաբերվել են Մշո դաշտում, Խարբերդում, Մա-
լաթիայում, անդամ Ադիամանում և Մարաշում³:

Նրանց վաղ օրինակները հանդիպում են Սիլիսաանի (Մալաթիայից
առնմիջապես հյուսիս) ուղ խալկոլիթյան (էնեոլիթյան) շերտերում⁴: Նույն
ժամանակով է թվագրվում հավանաբար նաև Թեփեչիկի (Խարբերդի մոտ)
կտցաձև ելուստներով կավամանը⁵: Ծանալն «Ասլան-թեփեի (Մալաթիա)
չհրատարակված նյութերը ապացուցում են, որ շուրթից կախված նման
ելուստով խեցեղենը դոյություն է ունեցել ամբողջ վաղ բրոնզեդարի ընթաց-
քում»⁶:

4. Ուղղահայաց վղով, մի փոքր դուրս ձկված շուրթով և աննշան կլո-
րացող իրանով բաժակներ, վղի հիմքում հորիզոնական խորաքանդակ դուռի,
վիղր դարձրված ուղղադիտ երկրաչափական դարձերով, իսկ իրանը ուղիղ-
անբձկված դարձանախշերով:

¹ T. Burton-Brown, նշվ. աշխ., նկ. 4, № 11, 12, 31, 33.

² Նույն տեղում, էջ 46, № 385 և աղ. VI, № 385.

³ C Burney, նշվ. աշխ., էջ 107, 104, 107, նկ. 100.


⁴ Նույն տեղում, էջ 163, նկ. 21, էջ 164, 194.

⁵ Նույն տեղում, էջ 163, նկ. 22, էջ 194.

⁶ Նույն տեղում, էջ 194.

Նման մի շարք բաժանների մասեր են հայտնաբերվել: Սե փայլեցրած մակերեսով և սոխրագույն աստառով բաժակի բեկորի ասորոզ վիզը դարդարված է երկշար սևծ, գծածածկ սեանորատիպ դարգերով, որոնց սիւն ղետեգված են փորթիկ քառանկյունաձև և եռանկյունաձև գծածածկ սլատկերներ (նկ. 59, № 2234/143):

Կան բաժակների մասեր, որոնց կամ վզի հիսքը (№ 2234/133d) կամ վզի մի մասն (№ 2234/133e) է գարդարված գծային երկրաչափական զուգահեռների լայն ժուլավանդով, որը երկու կողմից շրջափակվում է խորաքանդակ հորիզոնական գծայիններով (նկ. 10): Որոշ բաժակներ վզի հիսքում ունեն երկրաչափական դարդանախշերի լայն ժապավեն, իսկ իրանի ուղղանկյուն մասում՝ ուղղանկյուն երկրաչափական դարդանախշեր (№ 2234/125h), № 1964/41b, 50, № 2235/48a): Այս բաժակներն իրենց զուգահեռներն ունեն Շենգավթում (№ 1618j3):




Նկ. 59. Բաժակի մաս, վզին երկրաչափական դարդանախշեր:

5. Գլանաձև իրանով, տափակ հատակով սև փայլեցրած բաժակի մաս (№ 1964/16), որն իր զուգահեռներն ունի գտնված Շենգավթում (№ 1330j55): V. Թասերն ըստ ձևի նույնպես բաժանվում են խմբերի.

1. Լայնարերան գեպի ցած կոնաձև նեղացող և փոքր հաակով ավարտվող սև և սոխրագույն փայլեցրած մակերեսով, խորը թասեր՝ կիսագնդաձև կանթով:

Նման թասերից մեկի շուրթը եղբրված է ուղղահայաց կանգնած ոչ շաալայն ժապավենով (նկ. 60, № 2234/130), վերականգնված է, մյուսինը ավարտվում է ուղղակի կլորանալով (№ 2234/113c), երրորդի շուրթը հորիզոնական կտրվածքում առիակ է, արտաքինից գծային գոտիով շեղված (№ 2235/64b):



Նկ. 60. Թաս, կիսագնդաձև կանթով:

Այս խմբի թասերն իրենց զուգահեռներն ունեն Շենգավթում (№ 1330/99), Զրառատր

գտնաբերանտրվում (№ 1939/33), Վրաստանում՝ Կվացխևիկի B շերտում՝ Դաղստանում՝ Վերին Գունիրյան բնակաանդիում², Ֆանիկ-Թևիկի 4B շերտում՝ և այլուր:

¹ А. Джавахишвили, Л. Глonti, 2-й. а. 2-й. IV, № 153.

² В. М. Котович, Верхнегуньбское поселение, Махачкала, 1965, стр. 151, рис. 53, 8, 11, 13.

³ C. Burney, Excavations at Janik-Tere, North-West Iran, t. LXX, fig. 12.

Նման թասերի ամենավաղ օրինակներից մեկը հայտնաբերվել է Կենսա-
րոնական Անատոլիայում՝ Քան-Հասան ընկած տեղի ուշ խալկոլիթյան շեր-
տում։ Թասի վրա պահպանվել է կիսադնդաձև կանթը¹։ Նույն շերտի մի շարք
հաստախեցի կավամանների վրա ալգ կանթերը մեծ են և դեպի դուրս ձգ-
ված²։ Ըստ Դ. Ֆրենչի, այդ կիսադնդաձև կանթերը նման են Նախիջևանի
կանթերին³։ Քան-Հասան ՁԱ շերտում (ուշ խալկոլիթ) կիսադնդաձև կան-
թեր կան նաև կարճ դլանաձև վզով և ուռուցիկ իրանով կճուճի վրա⁴։

Հարավային Անատոլիայում հայտնաբերված հարգախառր, թույլ թրծու-
մով որոշ կանթեր նման են կիսադնդաձևին, սակայն ըստ Ջ. Մելարտի,
նրանք ընդհանրապես Կոնիայի դաշտավայրի համար, հայանի են եղակի օրի-
նակներով և առաջին անգամ հանդիպում են Մերսին XVI-ում⁵, որը Յ. Գարս-
աանզը վերագրում է միջին խալկոլիթին⁶։

Վերոհիշյալ գուգահեռներն անշուշտ հավաստում են դեռևս խալկոլիթ-
յան ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհի և հարևան երկրների
միջև փոխանակային կապերի առկայությունը։

2. Կիսադնդաձև խորը, ու մեծ թաս, շուրթը դեպի ներս կլորացող,
հատակը տափակ (աղ. XI)։ Ունի սև փայլեցրած մակերես և գորշագույն
փայլեցրած աստառ (№ 2234/161)։ Զուգահեռները կարելի է տեսնել Մշո
դաշտում, Խարրերգում, Մալաթիայում⁷, Վրաստանում՝ Զգուգրիս-գվերգա-
յում⁸։

3. Կլորացող իրանով, երկկանթանի, ժապավենաձև դեպի դուրս ճկված
շուրթերով փոքր թասեր (աղ. XI, № 2234/162c)։ Արտաքինը սև փայլեցրած,
աստառ գորշագույն, անփայլ։

4. Բաժակատիպ փոքր թասեր (№ 2234/129), իրանը դեպի վեր մի փոքր
լայնացող (աղ. XI)։ Շուրթը եզերված է նեղ ժապավենով և դրսից դուռե-
կապ է։ Ունի մեծ կանթ, որը շրթի հետ եռանկյունաձև հարթակ է կաղմում
և արաաքինից երկթեք է։ Հատակը կլոր է և մի փոքր ներճկված։

Նման դավաթ-թասեր հայտնաբերվել են Արճեշում⁹։

5. Խորը, սև փայլեցրած թասեր փոքրիկ հատակով և լայն ընդունով։

Նման թասերի մի շարք բեկորներ են հայտնաբերվել, որոնց ընդորոշ են
շուրթից դեպի ներս կախված կտցաձև ելուստ կամ քիթ, որի երկու կողմից
իրանի վրա բացված են կլոր անցքեր և կարծես մարդու գեմք են հիշեցնում
(նկ. 61)։

Որոշ թասերի շուրթերը կտրվածքներում լայն ժապավեն են կաղմում
և կլորանալով դուրս առաջացնում, իսկ ներսից հիմքում շեշտվում են ներ-
ճրկված գծային դուրսիկով (աղ. XXII, № 1967/16), մյուս թասերի շուրթերը

¹ D. H. French, Excavations at Can-Hasan, 1962, AS, XIII, p. 38, fig. 56.

² Նույն տեղում, նկ. 5, 12, 13։

³ Նույն տեղում, էջ 30։

⁴ D. H. French, Excavations at Can-Hassan, AS, XIV, p. 133, fig. 8.

⁵ J. Mellaart, Early cultures of the South Anatolian Plateau II, AS, XIII, 1963, p. 199, 202, fig. 2, 4, 6, p. 204, fig. 3, 5.

⁶ J. Garstang, Prehistoric Mersin, Oxford, 1953, p. 147, fig. 91, 4, 5.

⁷ C. Burney, Eastern Anatolia..., p. 197, fig. 162, p. 201.

⁸ Б. А. Куфтин, Изв. арх., т. 74, № 73, 4.

⁹ C. Burney, Изв. арх., т. 185, № 100, 101, 189, № 102.

ոչ թե կլորանում են, այլ վերևից դեպի ներս ձկնվում և սուր եզր են առաջացնում (№ 1967/19, 13a), Կան թասեր, որոնց շուրթը նեղ ժապավենով մի փոքր դեպի ներս և ցած է թեքված (նկ. 61, № 2235/110b): Որոշ թասեր շուրթից սկսվող փոքր ելուստ ունեն, որը ոչ թե ներս է ձկնվում, այլ դժպր դուրս (№ 1967/13b): Թասերից սեկի ելուստը շուրթից չի սկսվում, այլ իրանի վերին մասում երկթեր ելուստ է առաջացնում, որի երկու կողմերում արված են փոքր անցքեր 1965 թ. № 16): Այս թասերն ունեն մուգ շագանակադուրն, սև և դեղին փայլեցրած առասուռ: Նկարագրված թասերը շատ յուրօրինակ են, բնորոշ դեռևս միայն Գառնիին, իրենց կտցածն ելուստներով հիշեցնում են ընկույզի տասպակի ձևի ներգրկումներով թասերը, սակայն նրանցից տարբեր են:


Հալտնարերվել են Գառնիի վաղ բրոնզեդարյան մշակույթի ստորին և միջին շերտերում:

Դեպի ներս թեքված շուրթերով թասեր հայտնաբերվել են Կենտրոնական Անատոլիայում՝ Քան-Հուսունի ու խալկոլիթյան շերտում¹, Գեսկսու (հնում՝ Կալիկադոնոս) գետի հովտի նախապատմական մի շարք բնակաանդիներում՝ Լճալ-թեփեում, Մութում², Զինդան-թեփեում³, Կոզուլ-բոզազում⁴: Մերսինում նման շուրթերով թասեր հայտնաբերվել են Տարսուս II-ում (որը թվագրվում է վաղ բրոնզ I-ով, մթա 2500 թվականից հետո)⁵:

Կոնիայի դաշտավայրում նման թասեր կան վաղ բրոնզ I և II-ում, սակայն, բաց Զ. Մելարաի, հազվադեպ են, բնորոշ չեն այդ դաշտավայրի համար, հայտնաբերվել են նաև Բեյլիոուլթանը վաղ բրոնզի ժամանակաշրջանի պալատում⁶:

Այդ թասերից կան նաև Քյուլ-թեփե Ib շերտում (մթա 1850 թ.)⁷:

VI. Քրեդաներ, խորր, ուռուցիկ ուսերով և փոքր հատակով, մեծ մա-



Նկ. 61. Թասեր, մարչու. դեմք հիշեցնող ելուստներով:

¹ D. H. French. Excavations at Can-Hasan, AS XIV, 1964, p. 136, fig. 9, 6--9, 11.
² D. H. French, Prehistoric sites in the Gök-Su Valley, AS, XV, 1965, p. 189, fig. 7, 20--24.

³ Նույն տեղում, նկ. 4, 3--5, 3, 916:

⁴ Նույն տեղում, էջ 186:

⁵ Նույն տեղում, էջ 186:


⁶ J. Mellaart, արդ. աշխ. էջ 214, 217, նկ. 9, 12--21:

⁷ Նույնի, Second millenium pottery from the Konja plain and neighbourhood. Belleten Türk Tarih kurumu, XXII, 1958, № 87, p. 336, t. IX, fig. 166--172, p. 321.

սամր սե փայլեցրած մակերեսով, դորշադուն, սև ե դեղին աստառով: Բուրին բնորոշ է ուսերի ղարդարումը կլոր կամ ձվաձև փոսիկներով, կիսադնդաձև կանթերով, եռանկյունաձև հարթակ կազմող ելուստներով, խուլ փանթերով և այլն:

Քրեղանները միմյանցից ղանաղանվում են շուրթերի ձևերով.

ա) Կան քրեղաններ դեպի դուրս անկյուն կազմող նուրբ շուրթերով, որը



Նկ. 62. Քրեղաններ ղարդարված փոսիկներով:


եղերված է անկյունային նեղ ժապավենով (Նկ. 62, № 2234/52, 152d, f, 153c, № 2235/38d, № 1964/50cd):

Այս քրեղաններն իրենց ղուղահեռներն ունեն էլարում (№ 2245/2, 28, № 2246/34, 54, 57, 59, 78, № 1813/32), Զրառատում (№ 1939/37), Բարադեվրիշում¹: Թրիալեթի XXV դամրանարլուրում նման քրեղաններից մեկը ղարդարված է ելուստների շարանով, իսկ մյուսը կետաղարդ ղոտուց ցած

¹ Г. С. Исмаилов, Автореферат, табл. I, II.

ուսերին ունի եռաշար թեք ակոսների խմբերով առաջացած անկյուններ. որոնց կենտրոնը զարգարում է էիսագնդաձև ելուստը (վՊԹ. № 4, 66—136. № 4—66—137)¹:

բ) քրեղաններ, որոնց բարձրագիւր, մասսիվ շուրթերը իշխում են նոր-րախեցի իրանի վրա: Նման մի շարք քրեղանների մասեր են հայտնաբեր-վել (№ 1964/14, № 2235/73, № 2234/98с), որոնց մեջ հատկանշական է դե-ղին փալեցրած մակերեսով և վարգագույն փալեցրած սոստառով քրեղանը,




Նկ. 63. Քրեղան, դարգարգած փոսիկով:

իրանի կենտրոնում եռանկյունաձև ելուստ՝ ուղղահայաց իշնող երկու անց-քով (աղ. XXII, № 2176/29):

Նման շուրթերով քրեղաններ բնորոշ են ղեռև Գառնիին:

գ) Կարճ և մի փոքր ներձկված վզով, նուրբ, անկյունային ժալգավենով եղերված շուրթերով քրեղաններ (աղ. XIII, նկ. 63, № 1964/33, № 2234/101a, № 2288/11): Այս քրեղանները իրենց ղուգահեռ-ներն ունեն էլարում № 2246¹ 63, Քրեղանների մասեր՝ ուռու-ցիկ փորին ձվաձև խուլ կանթ, հայտնաբերվել են նաև Աղթա-միրում (№ 2247/8b):


VII. Մինիատյուր կավա-մանենցը հիմնականում կրկնում են վերը նկարագրված խեցե-



Նկ. 64. Քրեղանիկ, փոսիկներով և ելուստով դարգարգած:

¹ Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, стр. 403.

դենի ձևերը, Հայտնարերվել են քրեղանիկներ (նկ. 64, № 2176/14) և թասիկներ (նկ. 65, № 2176/79)՝ զարդարված ներճկված փոսիկներով և խուլ ձվաձև կանթերով, կճուճիկներ ուղղաճայաց վզով, կլորացող իրանով և փոքրիկ ներճկված հատակով, ուսերը զարդարված կլոր փոսիկներով (№ 1965/103), գավաթիկներ՝ մոտ հիմքում կիսադնդաձև կանթ (նկ.



Նկ. 65. Թասիկի մաս, փոսիկով և խուլ-կանթ
կլորացող:

66), կամ շուրթից սեպվող տարրեր տիպի կանթերով (№ 2234/112, № 1967/10): Մի մասի վիզը զարդարված է դժային երկրաչափական զարդանախշերի ժապավենով, իսկ ուռուցիկ իրանը ռելիեֆ-ներճկված զարդերով (№ 2235/102), մյուս մասի ուռուցիկ փորը զարդարված է ձվաձև փոսիկներով, կիսադնդաձև խուլ կանթով (№ 2235/43a, b), կան նաև անդարդ գավաթիկներ

(1965 թ., № 17): Հայտնարերվել են ևրկու արտակարգ փոքրիկ լայնաբերան և դեպի ցած ձաղարած նեղացող իրանով կավամաններ (նկ. 67), հասարակ, անփայլ, պատրաստված դեղնա-վարդագույն կտվից (1865/7a, № 2235/128a):

Նկարագրված միներալոյուր կավամանները կարող էին օգտագործվել որպես խաղալիք, աղաման, կոսմետիկայի համար, կամ որպես ներկապնակ և այլն: Միներալոյուր կավամանները բնորոշ են վաղ բրոնզեդարյան մյուս բնակատեղիներին ևս:

VIII. Կափարիչներ, սկավառակաձև, ռելիեֆ, լայնադիր ժապավենաձև շուրթերով: Որոշ կափարիչների կենտրոնական մասը տափակ է, հարթ (նկ. 66, № 2234/110, № 2235/118a, b, № 1964/47), իսկ որոշ կափարիչների ամփոփած զոգավորով (№ 2235/118c, № 1967/15, 22, № 2176/62), Բուլորը կենտրոնում ունեն կիսադնդաձև կանթ և նրա կողքին անցք՝ զուրորդ համար: Կափարիչների ռելիեֆ շուրթերը երբեմն զարդարված են կլոր փոսիկներով:

Նման կափարիչների մի շարք բեկորներ են հայտնարերվել սև կամ վարդագույն փայլեցրած մակերեսով, մրից սևացած զորշագույն (№ 1964/47) կամ ալ կսրմիր փայլեցրած աստառով (№ 1967/22):


Այս կափարիչներն իրենց բաղմամբիվ զուգահեռներն ունեն Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան մշակույթում:

Գտնիում հայտնարերված առփակ կենտրոնական մասով մի խումբ կափարիչներն ունեն դմբեթաձև եռոտանի կանթեր, որոնց զաղաթը զարդարված է ներճկված փոսիկով (№ 1967/16, 15):

Կափարիչների նման տիպի կանթերը մեղ հայտնի են միայն Շենգավիցի (№ 1618/252, 258, № 1330/270), որոնց ոտքերն ավելի շեշտված են և դեպի վեր ձգված:

IX. Օջախ-կրակարաններ. I. Օջախ-կրակարանը ունի կարճ և լայն դրանաձև իրան՝ ուղղաճայաց պատերով (մոտ 15 սմ բարձրությամբ) և լայն, տափակ հատակով (31 սմ տրամագծով, նկ. 14):

11. Օջախ-կրակարանը բաղկացած է երկու առանձին մասերից, զլանաձև իրանով և տափակ հատակով կրակարանից և նրա վրա դրված շեփորաձև լայն տափակ շուրթերով, կոնաձև դեպի ցած լայնացող իրանով հենակից (նկ. 15, 16): Կրակարանի պատերը զլանաձև են, սակայն նախորդի




Նկ. 66. Կավաթիկ և կափարիչ:

նման ուղղահայաց չնս, այլ դեպի հատակն իջնելով լայնանում են: Այսպիսով բերանը և հաաակը նույն արամագիծը շունեն, բերանը մի փոքր ավելի է նեղ, քան հատակը: Այս կրակարանը նախորդի համեմատ ավելի լայն է

և ավելի ցածրադիր (րարծրությունը 9,5 սմ, բերանի տրամագիծը 37 սմ, հատակի արամագիծը 38,5 սմ, խեցու հաստությունը 2 սմ):

Հենակի շուրթերը լայն են և տափակ, փոված (լայնությունը 8,8—9,2 սմ), իրանը կարճ է և կոնաձև դեպի ցած լայնանում է, բայց ոչ շատ (հենակի րարծրությունը 12,5—13 սմ, բերանի արամագիծը 24,6 սմ, ստորին մասի արամագիծը 26 սմ, ընդհանուր արամագիծը շուրթի մի եզրից մյուսը 43,5 սմ): Ինչպես I գլխում հիշատակվեց, նրա վրա երբեմն գրվել է նաև պայտաձև հենակ:

Հենակի և կրակարանի րարծրությունը միասին վերցրած 19,5 սմ է:



Նկ. 67. Մինիատյուր կավամաներ:

Այս օջախ-կրակարանները պատրաստված են վարդագույն և շեկ գույնի, խոշոր ավաղահատիկներով շագախված հասարակ կավից: Արտաքինից կռկած, հարթեցրած են և անփայլ, կրակի ազդեցության հետևանքով քայքայված: Նրանք գրված էին ավաղի և կավի

ամուր շագախով կառուցված հիմքի վրա և ընդհանուր կառուցվածքով ամուր շագախով և կոարված կավամանների թեկորներով:

Նման տիպի օջախ-կրակարանների կոմպլեքս մեզ հայտնի է միայն Գառնիից: Շենդավթում հայտնաբերված կլոր շարժական օջախները Գառնիում դեռևս բացակայում են:

Կրակարանի վրա գրված լայնաշուրթ, կոնաձև, դեպի ցած լայնացող հենակների մասամբ կարելի է նմանեցնել Արևիկում և Նախիջևանի Քյուլթեփեում հայտնաբերված մանդալները, որոնք ունեն լայն և ափսոսաբար հորիզոնական շուրթ, սակայն իրանը դեպի ցած ոչ թե լայնանում է, այլ մի փոքր նեղանալով, ավարտվում է կլորացող հասակով:

X. Հենակներ, պատվանդաններ: 1. Հայտնաբերվել են օջախի շարժական պայտաձև հենակների րադմաթիվ թեկորներ:

Այս հենակները կարծես խիստ ոճավորված մարդկային ֆիգուրներ լինեն նստած վիճակում, ոտքերը առաջ պարզած, բացած: Մեզ այդ համոզմանն են բերում հենակների հատկապես ներրանաձև վերջավորությունները և կենարոնական վերասլաց մասերը, որոնք մեծ մասամբ մարդակերպ են, իսկ երբեմն էլ խիստ ոճավորվելով, դառնում են ըրդաձև կամ կոնաձև: Որպես կանոն ընդհանուր ներսից կենարոնում և ներրանաձև վերջավորությունների կողքին ունեն կոնաձև փոքր ելուսաներ, իսկ արտաքինից կենարոնական մասում՝ եհսադնդաձև կանթ (աղ. XVII):

Հայտնաբերված հենակները ունեն կառուցվածքային բնույթի նրբերաններ: Որոշ հենակներ կոնաձև ելուսաններ ունեն ներրանաձև վերջավորությունների աակ, հավանաբար օջախին կամ դեմնին ամուր կանգնեցնելու նպատակով (աղ. XIV, № 2235/44, 108), մի քանիսը ներսից, ստորին մասում ունեն աղեղնաձև ռելիեֆ դռաի (աղ. XV, № 2176/40):

¹ О. А. Абибуллаев, Первые итоги раскопок Кюль-тепе, Труды музея по истории Азербайджана, т. II, Б., 1957, стр. 89—90, табл. VI, рис. 2, նույնի, Археологические раскопки в Кюль-тепе, табл. XXXI, рис. 1, 2.

Հենականների կենտրոնական ելուստների մի մասը մարդակերպ է, պար-
դունակ (աղ. XVI, № 2234/108, № 2176/40a), մի մասը բրգաձև (աղ. XV.,
№ 2176/40b), մյուս մասը հատած կոնի ձևի (աղ. XVa, 2176/52, № 1964/24,
32) և այլն: Հատնաբերվել են նաև բազմաթիվ ներբանաձև վերջավորու-
թյուններ:

Բոլոր հենակները պատրաստված են ավաղախառը, ոչ բարձրորակ կա-
վից, վառ հունցած, շուա քայքայվող, արաաքինը հարթեցրած, դեղնավուն
կամ վարդադուն անդորով պատած, որոշ հենակների վրա պատկանվել են
մրից սևացած հետքեր:

Պատած հենակները իրենց տարատեսակներով հայնարերվել են բո-
լոր վաղ բրոնզեդարյան ընկատեղիներում: Հյուսիսում նրանք հասել են
Լուդովիցի ընկատեղին¹, իսկ հարավում Հայկական լեռնաշխարհի մշա-
կույթի հետ տարածվելով, հասել են Հյուսիսային Սիրիա և Պաղեստին:
Մերսինում, Յումուկ-թևփեի XVI—XII շերտերում հայնաբերված եղջերա-
վոր հենակները զարձյալ իրենց դուղահեռներն ունեն Հայկական լեռնաշ-
խարհում: Տափակ հատակով, քառանիսա բարձր իրանով, կամ ձվաձև, եր-
կարսովուն մասսիվ իրանով եղջերավոր հենակներ, վերին մակերեսի կենտ-
րոնում մոտսիվ, ձվաձև կանթ, հայնաբերվել են էջմիածնի մոխրաբլուրնե-
րում (Շրեշ-բլուր, Քյուլ-թևփե, աղ. XVIII, XIX, № 766/155—158, № 779/15),
Ղվաթթնոցում (ՁԳԹ № 145), Արևիկում, Ջրահովտում և Թիզնիսում (№ 634):

2. Գտնիում հայնարերվել են կոնտձև ելուստներ քառակյունաձև
դասականի վրա: Նրանք նույնպես կարող էին առանձին հենակի դեր կա-
տարել: Նման հենակներից մեկը հատած կոնի ձև ունի (աղ. XVIIa, № 1964/
363), նրա պատվանդանը հավանարար հավասարակողմ քառակյունի է
և դել, որի կողմերից մեկի երկարությունը 12 սմ է:

Նման հենակներ հայտնաբերվել են Շրեշ-բլուրում, Քյուլ-թևփայում
(աղ. XVIIa, № 766/155a, ա):

3. Գտնիին բնորոշ է նաև բրդաձև կամ աշտարակաձև հենակ, սառին
մասում կիսադնդաձև կանթի հետքով (աղ. XXIa, № 1967/20): Նմանները
հայտնաբերվել են նաև Շրեշ-բլուրում (№ 779/15), Շենդավթում (№ 1330/
233):

4. Հենակների մյուս տարատեսակը դա կոճղաձևն է՝ մակերեսները շր-
ջանաձև ապակի, իսկ մեջքը ներճկված (№ 2288/36), պատրաստված է դոր-
լադույն կովից, արաաքինից դեղնավուն անդորով պատած (բարձրությունը
5 սմ է, իսկ մակերեսների արամագիծը 8 սմ):

5. Պատվանդան-հենակները թաղարստիպ դեպի վեր, լայնադիր փոված
շուրթերով, կոնաձև դեպի ցած լայնացող իրանով, շուրթի և իրանի սիաց-
ման մոտում ձվաձև կամ երկթեք խուլ կանթով (նկ. 68, աղ. XX, № 2235/26c,
96, № 1967/12): Նման պատվանդաններ, սակայն ավելի շնչոված անցում-
ներով էլտրի դումրարաններում հայտնաբերվել են կճուճների տակ դրված²:
Այս պատվանդանները կառուցվածքային որոշ աարբերություններով բնորոշ

¹ P. M. Мунчаев, Древнейшая культура Северо-Восточного Кавказа, стр. 126.


² S. Hood, նշվ. աշխ., էջ 139:

³ J. Garstang, նշվ. աշխ., էջ 133, 143, նկ. 90, էջ 166, 167, նկ. 106.

⁴ Է. Խուլաղյան, նշվ. աշխ., էջ 67, 68, նկ. 19:

են Հայկական լեոնաշխարհի բաղմաթիվ հուշարձաններին: Հայտնարեբվել են Շրեշ-բլուրում, Քյուլ-թափայում, Բջնիում, Խորումբուլաղում, Շենդավթում¹, Սեանի ավաղանում², Կիրովականի Քոսի-ճոթերում, Աղստեի հովտի Բարա-դեվրիշում³: Հյուսիսում նրա վերջնակետը դեռևս Թրիալեթի Կանաթափա (№ XLVI) դամբարանընրն է⁴:

6. Գառնիում հայտնարեբվել է ընդամենը մեկ եռոտանի պատվանդան



Նկ. 68. Թաղարառիկ հենակներ:

(աղ. XXX, № 2235/105b), որի երեք ոտքերն էլ թերի են: Իր ձևով մասամբ տարբերվում է մյուս բնակատեղիների բարձրավետ եռոտանի հենակներից: Նախ ոտքերը միացնող կամարը փոքր է և կլորացող, ոտքերը անկյունավոր են և հասա: Կոպիտ է և անդարդ: Հասարակ եռոտանի պատվանդանի մեկ օրինակ հայտնի է Շենդավթից, մեկ այլ օրինակ էլ Աղթամիից (№ 2247/5): Եռոտանի պատվանդաններ դեռևս բնորոշ են միայն Հայկական լեոնաշխարհի մշակույթին:

XI. Կանթեղներ-ձիքաճաղ-ներ: Գառնիում հայտնարեբվել են թելի կոճի ափսի կավակերտ ըրեր: Նրանց ստորին կլորացող մակերեսը տափսկ է, իսկ վերինը՝ թասանման ղողավորվող, մրից սեացած: Բ. Ա. Կուֆտինի բնորոշմամբ նրանք հենակի դեր են կատարել, սակայն իրականում նրանց ղողավորվող մասերում ձեթ կամ ճարպ են ալրել, այսինքն կանթեղի դեր են:

կաարել՝ հավանարար ծիսական արարողությունների ժամանակ և օգտագործվել են սրբաղան կրակի համար: Գառնիում նման երկու կանթեղներ են հայտնարեբվել (աղ. XXI, № 1964/296, № 2176/12): Այս կանթեղները տարածման լայն շառավիղ ունեն:

Բացի վերոհիշյալ հիմնական խմբերից, Գառնիում հայտնարեբվել են նաև մեծ կճուճների ուռուցիկ փորի մասեր, կենարոնում կիսադնդաձև կանթ (№ 2235/136, № 2234/101b): Անշուշտ նրանք բարձր, խողովակաձև վղով և


¹ Նույն տեղում, աղ. XVIII, վերին շարք:

² Օ. А. Мнацаканян, Раскопки на осушенной территории Озера Севан, СС., XXIII, 1955, стр. 187, рис. 5:1.

³ Г. С. Исмаилов, Автореферат, стр. 11.

⁴ Տե՛ս վրասանի պետական թանգարան, № 4—66—59:

տանձաձև իրանով կավամանների մասեր են (նկ. 69), որոնցից հայտնաբերվել են Նախդեանի Քլույ-թափալի I շերտում, իսկ 1966 թ. նսան ամրոզյական կհուճներ հայտնաբերվել են Ջրահովիտ ընկերում (Արտաշատի շրջան), նրանց միմիայնությամբ տեսակները հայտնի են Հառիճում: Կարմրաշագանակագույն մակերեսով նրան կանթանի կհուճներ ընտրող են նաև Սաղաթլուի մոտ՝ Կենյ-թեփե (Կերեղ-ղետի ձախուփի տերրասի) բնակատեղիի վաղ բրոնզեդարյան շերտին: Հայտնաբերվել է նաև Օղնիի բնակատեղիում:



Նկ. 69. Տանձաձև իրանով կավաման:

Գտնիում հայտնաբերված ծակստեղծ կավամանների մասերը հայտնաբերված քամիչի բեկորներ են (№ 2288/29), Կան կավամանների մասեր, որոնց շուրթից սկսվող կանթը ոչ թե սովորաբար հիմքում է ավարտվում, այլ վրի միջին մասում (աղ. XXI, 2234/82, 142h), նման կանթերով կավամաններ հայտնաբերվել են:

Շենգավթում (№ 1330/60), Իդդիբի հովտում (որոնց Չ. Բարենյը համոզված կերպով վերագրում է վաղ բրոնզի III փուլին)⁴, Արծնի (Կարագ) վաղ բրոնզեդարյան վերին շերտերում:

Գտնիի խեցեղենին հատկանշական են նաև կանթերի տարբեր տեսակներ, որոնք բաժանվում են հետևյալ խմբերի. 1. Կիսագնդաձև մեծ և փոքր կանթեր՝ խողովակաձև անցքով: 2. Ժապավենաձև, վերին՝ եռանկյունաձև հարթակով երկթեր կտնթեր: 3. Գմբեթաձև եռոտանի կանթեր: 4. Խուլ կտնթեր, կտն ունկեր մեծ և փոքր, տարբեր տեսակների. կիսաշրջանաձև՝ անցքի փոխարեն կլար ներձիված փոփոկներով, ձվաձև՝ նույնպես փոփոկներով կտն երկարավուն ալոսներով, եռանկյունաձև՝ կենտրոնում ուղղահայաց անցք, բաղամանիստ երկարավուն խուլ կանթեր և այլն: Խուլ կանթերը գերադանցադես իրանի ուռուցիկ մասում են տեղադրված:

Գմբեթաձև եռոտանի կտններով կանթերը թվով քիչ են և ընտրող են միայն կափարիչներին:

Ժապավենաձև և եռանկյունաձև հարթակով երկթեր կանթերը սկսվում են շուրթից և ավարտվում վրի հիմքում կամ ուռուցիկ ուսերին, միջին մասում նեղ են, իսկ հիմքում լայնանում են, կիսալուսնաձև փուլում:

¹ Պեղումները Բ. Խաչատրյանի:

² Պեղումները Տ. Չուրիկիշվիլու, սյուրբը գտնվում են Վրաստանի Արվեստի ինստիտուտում:

³ Б. А. Куфтин, Археологические раскопки, 1947 г. в Цалкипском районе, Тб., стр. 37, табл. XXXIX.

⁴ С. Burney, Նշվ., էջ 187, 191, նկ. 151, 152.

⁵ Н. Kosay-K. Turfa Նշվ. աշխ., էջ 398, վերին շարք:

Կիսաշրջանաձև և ձվաձև կանթերը տեղավորված են վղի հիմքում, վղի միջին մասում, իրանի ուռուցիկ մասում և այլն: Կան շուրթից կտրված, կտցաձև կանթեր:

Գառնիում հայտնաբերվել են նաև կտվե շրջանակներ (նկ. 6, միջին շարք) և մանկական սայլի անիվներ (աղ. XXIII և XXIV):

Գառնիի վաղ բրոնզեդարյան խեցեղենը ըստ որակի և մշակման առանձնահատկությունների, բաժանվում է երկու խմբի.

I. Հաստրակ խոհանոցային

II. Գեղարվեստորեն կատարված բարձրարվեստ խեցեղեն:

I. Ինչպես վերը ասանք, հասարակ խոհանոցային խեցեղենը պատրաստված է սվաղախառը, վատ մշակված, վատ հունցված և վաա թրծված կավից, շուտ քայքայվող փխրուն, մեծ մասամբ շեկավուն, մասամբ վարդագույն, անգամ երբեմն դեղին անդորով պատած: Այս խմբի մեջ դերադանցորեն մտնում են օջախներն իրենց ամբողջ կոմպլեքսով, օջախի ընդհանուր տիպի հենակները, եռոտանի պատվանդանը, վարդագույն սափորը, բանկայաձև կավամանները, տանձաձև իրանով կավամաններ, քամիչներ և այլն:

II. Գեղարվեստական խեցեղենը բաղմաձև է: Այն կատարված է լավ հունցած, մշակված, արտակարգ լավ թրծված, բարձրորակ կավից: Արտաքինը կոկած, հարթեցրած, մեծ մասամբ սև, նաև վարդագույն, դեղնագույն, դեղնա-նարնջագույն, մասամբ մոխրագույն և դարչնագույն անդորով պատած: Աստառը երբեմն փայլեցրած, իսկ մեծ մասամբ անփայլ, նույնպես բաղմադան գույներով՝ վարդագույն, սև, մոխրագույն, դարչնագույն, ջադանակադորձագույն, կաթնագույն և այլն:

Մեծ կարասները, սափորները հաստախեցի են, իսկ միջին և փոքր կավամանները՝ դերադանցապես նրբախեցի:

Ըստ դարձանախշման առանձնահատկությունների, գեղարվեստական խեցեղենը բաժանվում է երկու հիմնական խմբերի.

I. Խեցեղեն՝ զարդարված փոսիկներով, ներձկված ակոսներով և խուլ ունկ-եղուսաներով:

II. Ռեյիեֆ, ռելիեֆ-ներձկված և դժային զարդանախշերով խեցեղեն: Առաջին մեծ խումբը զարդարված է երկու տիպի փոսիկներով.

1. Ձվաձև փոսիկներով

2. Փոքր կլոր փոսիկներով

1. Ձվաձև փոսիկները հանդիպում են կանթի աակ և նրա հակառակ կողմում՝ իրանի ուռուցիկ մասում, որանդ կամ մեկ հատ են, կամ մեկ մեծ միջին մասում, իսկ աչից և ձախից մեկական փոքրերը:


Կան նաև փոքր ձվաձև փոսիկներ կամ ձվաձև փոսիկներ՝ երկու կողմից շրջապատված մեկական թեք, նեղ, երկարավուն ակոսիկներով:

2. Կլոր փոսիկներ հանդիպում են կանթի վերին եռանկյունաձև հարթակում, կանթի տակ, ուռուցիկ փորի կենտրոնում:

Հաճախ փոսիկները զուգորդված են ասորեր տեսակի խուլ կանթերով, կամ էլ զարդանկարը ներկայացնում է փոսիկների և ներձկված ակոսների հաջորդականություն: Զարդանախշման այս ձևերը յուրահատուկ են Գառնիին և էլարին:

Նման զարդանախշեր ունեն Գառնիի և մեծ, և՛ փոքր կավամանները:

Փոսիկ՝ Լրկու կողմից շրջապատված ուղղահայաց թեք ակոսներով հանդիպում է նախիջնասի Քյուլ-Քափաչի II շերտում: Նման հոաշար թեք ակոսներին և փոսիկի համադրությունն է ներկայացնում նաև Ասլան-Քեփեում (Մալաթիա) հայտնաբերված խեցու վղի բեկորի դարձանակը:



Նկ. 70. Խեցու բեկոր, դարձարված ուլիեֆ-նեոճևված դարձանակով:

Կեոյ-Քեփեում փոսիկների և ակոսների համադրությամբ խեցեղենը տողին տնդամ երևում է գույիս «X2» շերտում²:

Վերոհիշյալ դարդանախշերով խեցեղենը տարածման արտակարգ լայն շառավիղ ունի:

Նրկրորդ լոմրի խեցեղենը դարդարված է ուլիեֆ, ուլիեֆ-նեոճևված և ցծալին դարդանախշերով: Այն իր հերթին բաժանվում է ենթախմբերի.

1. Կավումանների ուռուցիկ փորր միայն մեկ երեսից դարդանախշված է լայնակուս, ոչ խորր ուլիեֆ-նեոճևված, պարուրաձև վերջավորություններ ունեցող բարդ կամուսպիդիայով:

Նրբեմն այս կամուսպիդիան կրկնվում է նաև կարասների վղերի վրա (№ 2234/134):

2. Կավումանի վղի հիմքում ուղղադիժ երկրաչափական դարդանախշերի նեղ ժապավեն, իսկ ուռուցիկ փորին նեղ և ոչ խորր ուլիեֆ-նեոճևված, պարուրաձև վերջավորություններով դարդանախշեր: Այս խումբը Գաոնիում ընդամենը երկուսից-երեք օրինակով է արահայտվել (№ 2235/69, № 2234/25b, 109h), հարում է Կիրովականի Դոսի-ճոթերի և Սաշաոցի բլուրի խեցեղենին:

3. Կավումանների վիզը պարզարված է ուղղադիժ երկրաչափական նուրբ ցծանտխշերի նեղ և լայն ժապավեններով, իսկ ուռուցիկ փորի վրա ուղահայանվել են ուլիեֆ-նեոճևված պարպանախշեր: Այս խումբը լրիվ հարում է Շևսպովթի խեցեղենին:

4. Ուլիեֆ-նեոճևված դարդանախշերը կաղաված են պարույրներով ամբարովող բարդ կամուսպիդիաներից:

¹ Kilit Kökten, 1945 Jilinda Türk tarih Kurumu adına yapılan tarih öncesl arastirmaları, Bellelen Turk Tarih Kurumu, 1947, № 43, ադ. XCIII, նկ. 3:

² T. Burton-Brown. Նշվ. աշխ., էջ 42:

Շատ հավանական է, որ ուելիեֆ-ներձկված զարդանախշերը կատարված լինեն գլանաձև կնիքի օգնությամբ: Այդ բանը լավ զգացվում է Գառնիի խեցեղենի բեկորներից մեկի վրա. որը զարդարված է հավաղ շեղանկյունների և սլարույրների համադրությամբ (նկ. 70, № 2234/109b) և հատկապես Կիրովականի Մաշաոցի բլուրի և Քոսի-ճոթների խեցեղենի վրա: Որ նման եղանակով կատարված զարդանախշերը գլանաձև կամ այլ կնիքի արտատիպն են իշեցնում, նշում է նաև Լ. Լեգրենը¹:

Գլանաձև կնիքի օգնությամբ է կատարված Գեոյ-թեփեի «K» շերտում չայանարեքված կափարիչի զարդանախշը²: Մթա III հազարամյակի մշակույթում երկու կնիքներ են հայտնաբերվել Գուգարեբտկա-Ցիխագորիայում³. Երկու միանման կավե կնիքներ էլ հայտնաբերվել են Յանիկ-թեփեում⁴:

Այսպիսով, վերոհիշյալ փաստերի օգնությամբ կարելի է հավաստել նրանց դոյությունը և մեզ մոտ:

5. Կավամանների մի մասի և՛ վիզը, և՛ ուռուցիկ փորը զարդարված են դծային զարդանախշերով:

6. Գծային զարդանախշերը գերազանցապես երկրաչափական են, միայն մեկ օրինակ՝ թռչնադարձ (№ 2235/103a):

7. Երկրաչափական զարդանախշերի մոտիվներն են՝ դծածակ մեանդրներ և մեանդրների մասերը, զիզզադ ժապավեններով կազմված անկյուններ և եռանկյուններ՝ նույնպես թեք դծիկներով ծածկված, դծածակ զիզզադ ժապավեններ, ցանցածածկ դաշտեր՝ մեկլնդմեջ կամ դծածածկ կամ կետածածկ:

Երբեմն ձգված, երկարավուն մեանդրափայ զարդերով կտրված մի ամբողջ կոմպոզիցիա պարփակվում է զիզզադ դծերով կազմած տնկյունով:

Ինչպես Վ. Լեմբն է նշում, մեանդրները Անատոլիայում հայտնի չեն, իսկ սլարույրները շատ հազվադեպ են⁵: Եվ իրոք, ուելիեֆ ռազմադատար սլարույրով խեցու մեկ բեկոր հայանաբերվել է Ալաշայի խալկոլիթյան շերտում⁶. Ռելիեֆ-ներձկված սլարույրով մեկ խեցի հայանաբերվել է Բեյլիսուլթանում և վերագրվում է վաղ բրոնզի II փուլին (մթա 2500—2200 թթ.)⁷, մեկ օրինակ էլ հայտնի է Քյուլ-թեփե Ib շերտից (մթա 1850 թ.)⁸:

8. Կետերի հեռ համադրված նրբադիծ երկրաչափական զարդանախշեր:

Նման զարդանախշով խեցեղենի բեկորներից մեկի վրա (№ 2234/133i) պատկերված է ճատրակի (շախմատի) տախտակը հիշեցնող զարդանկար, որի հարթակների մի մասը դծածածկ է, մի մասը կետածածկ (նկ. 71): Հնտրավոր է, որ այսանդ պատկերված լինեն վարած և ցանած դաշտեր: Ընդորում վարած դաշտերը դծածածկով են պատկերված, իսկ ցանած, սերմածր՝ կե- աիկներով: Գծածածկ նման դաշտեր պատկերված են Գառնիի նաև մեկ այլ

¹ L. L. Legrain, *Archaic Seal-impressions*, New-York, 1939. p. 5.

² T. Burton-Brown, նշվ. աշխ., էջ 39, աղ. V, նկ. 34.

³ Պեղումները Ս. Նադիմաշվիլու, նյութերը հրատարակված չեն:

⁴ C. A. Burney, *Excavations at Janik-Tepé, North-West Iran*, p. 148, t. LXXIV, 54.

⁵ W. Lamb, նշվ. աշխ., էջ 28.


⁶ C. Burney, *Eastern Anatolia...*, p. 167.

⁷ S. Lloyd and J. Mellaart, *Beycesultan Excavations*, 1957, AS, VIII, 1958, p. 118, fig. 2, 6 p. 112—113.


⁸ J. Mellaart, նշվ. աշխ., աղ. IX, նկ. 170.

րեկորի վրա (նկ. 72), հանդիպում է Նենդավթի խեցեղենի վրա (№ 1330/37, 102, 106)։ Այդ դարդանկարի կապը դաշտի և սերսերի հետ ավելի հավանական է դառնում, երբ մենք այն հասնմատում ենք Տոիպուլի խեցեղենի և կանացի արձանիկների վրա պատկերված դարդանկարների հետ, որոնց ուսումնադիրորդը լայն դուրահեղուների օղնությամբ համոզեցուցիչ է դարձնում դաշտերի և սերսի նման խորհրդանշումը։

Կետերի հետ համադրված նրբագիծ երկրաչափական դարդանախշերը բնորոշ են Գառնիին և ավելի ցայտուն են արահայտված Կիրովականի բնակատեղիներում։ Քոսի-Հոթերի մոխրագույն, բաց դեղնավուն և սև փայլեցրած մի խումբ խեցեղենի երկրաչափական աստիճանաձև դարդանախշերում արտադրությամբ կեանքածակ են (1959 թ., № 1, 2, 9)։ Նման բեկորներ հայտնաբերվել են նաև թաղավորանիստում (1959 թ. № 6)։ Մաշտոցի բլուրում կետածակ են դավաթների վրի ռիմի երկրաչափական դարդանախշերի գոտիները։ Նենդավթում նման դարդանախշերով խեցեղենը նույնպես սակավ է։ Կավամաններից մեկի վրա դարդարված է եռանկյունիների մեջ ամփոփված եռաշոր եռանկյունիներով, որոնք կեանքածակ են (№ 1442/57)։



Նկ. 71. Խեցու բեկոր, նորրդժույին և կեսային դարդանախշերով։




Նկ. 72. Խեցու բեկոր, հատրակը հիշեցնող դարդանկարով։

Նրբագիծ կետադուրդ երկրաչափական դարդամուտիվներն իրենց ցայտուն տրամադրությունն են գտել Հրաստանի մի շարք դամրանարկուրների (Թրիպլեթի XI, XLVI, Թեթրիժարույի 1957 թ. պեղած և Բեդենիի) բարձրարվեստ խեցեղենում։ Թրիպլեթի XI դամրանարկուրի նրբախեցի զրնված և երկկսնիկ իրանով, օղակաձև նուրբ կանթերով (որոնք կիսադնդաձևի նրբացած սեւակն են) կավամանները դարդարված են նրբագիծ, պծածակ ժուպովներով շեղանկյունիներով, եռանկյան մեջ ամփոփված բաղմահարկ պծածակ եռանկյունիներով, որոնք ուղեկցվում են կեսաշորերով (ՎՊԹ № 4—66—50, 51, 52, 56, 57, 59)²։ Նույն դամրանարկուրում հայտնաբերվել է փոված շուրթերով և կոնաձև իրանով թաղարատիպ հենակը (ՎՊԹ № 4—66—59), որը միտկն է առայժմ վրաստանի անբիադրիայում և, ինչպես վերը ասանք, բաղմաթիվ դուրահեղուների Հայկական լեռնաշխարհի մթա III հազարամյակի մշակույթում։

¹ Б. А. Рыбаков, Космогония и мифогония земледельцев неолита, СА, № 1, 1965, стр. 29, 31.

² Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, табл. LXXVI.

նկարագրված խեցեղենին հար և նման է XLVI (Կանաչ-թափա) դամրանարևուրի, որն իր րազմադարձ օբեկտի պարունակով, կծու ափսոսանքով է՛լ ավելի է կապվում վաղ բրոնզեդարյան խեցեղենի հետ և դարձաբանված է նուրբ դժային մոտիվներով, դոտակոմով կետածածկ ժապավեններով՝ Դամրարանների այս խմբին են հարում նաև Թեթրիծղարոյի 1957 թ.



Նկ. 73. Խեցու բեկոր օբեկտի, խոյադուխ շրջանի պատկերով:

պեղած դամբանարևուրի խեցեղենը² և Բեդենիի դամբանարևուրին³:

9. Ռեկիեֆ դարձանախշեր, որոնց սիրված մոտիվներն են՝ խոյադուխ շրջանների պատկերները և թռչունը:

Գտնիում օբեկտի խոյադուխ շրջանների պատկերով երկու ասորեր կավամանների բեկորներ են հայտնաբերվել (նկ. 73, 1964 թ., պեղումներ, № 28 և 1965 թ., № 90): Չնայած Հայաստանում այդ շրջանների մետաղե օբեկտները դեռևս հայտնի չեն, սակայն նրանց պատկերում խեցեղենի վրա հավաստում է այդ շրջանների առկայությունն ու գործածությունը

Գտնիում և ընդհանրապես Հայկական լեռնաշխարհում:

Խոյադուխ, կամ, ինչպես ընդունված է ասել՝ երկպարուն գլխիկով շրջանները և կախիկները լայն ասարածում են ունեցել Առաջավոր Ասիայում (Հիսար IIB⁴, Դամդան, Անաու II, Տրոյա⁵), Վրաստանի վաղ բրոնզեդարյան հուշարձաններում⁶: Բրոնզի հաջորդ փուլերում նրանք թափանցել են Հյուսիսային Կովկաս⁷, որտեղից էլ ավելի հյուսիս⁸: Սակայն այդ շրջանները միմյանցից ասարերվում են կառուցվածքային որոշ մանրամասներով:

Գտնիի խեցեղենի վրա պատկերված խոյադուխ շրջանի անմիջական

¹ Բ. А. Куфтин, Археологические раскопки 1947 г. в Цалкинском районс, стр. 23, табл. XXIV.

² О. Джапаридзе, Археологические раскопки в Тriaлетн в 1957—1958 годах, Тб., 1960, *զբաց լեզվով*, ադ. II:

³ Պեղումները Գ. Յ. Գորեշիշվիլու, նյութերը հրատարակված չեն:

⁴ E. Schmidt, Excavation at Tepé Hissar, Damghan, Philadelphia. 1939, p. 119, l. XXIX.

⁵ E' Herzfeld, Iran in the Ancient East, London-New-York, 1941, p. 154, fig. 273.

⁶ О. Джапаридзе, К истории грузинских племен на ранней стадии медно-бронзовой культуры, стр. 138, рис. 29, стр. 207, рис. 44, табл. XIII. Т. Чубинишвили, Амра-инс Гора, стр. 73, табл. 14.

⁷ «История Дагестана», т. I, М., 1967, гл. III, медно-бронзовый век, стр. 67, рис. 20. В. М. Марковин, Новый памятник эпохи бронзы в Горной Чечне, Древности чечено-ингушети, М., 1963, стр. 86 рис. 21, стр. 80, рис. 23.

⁸ П. Д. Степанов, Следы южной культуры эпохи бронзы в бассейне реки Мокши, КСИМК № 59, 1955, стр. 73, рис. 26.

դուղահենները մետաղից կարելի է տեսնել Կվացխելներում՝ և Ուրբնիսի քա-
ղաքի XX տեղամասի վաղ բրոնզեդարյան N 44 դամբարանի նութերում¹։

Այս շրատեղիները Հին Արեւելքի վերահիշյալների նման վերին սասում չեն
ստացվում և երկու կողմից պարույրներ կաղմում, այլ նրանց խոյի գը-
խին բնորոշ ձև է արվում, մի տեսակ եռանկյունաձև հարթակ են կաղմում
երկու կողմից ուսրվող մասսիվ եղջուրներով։ Այսպիսով, Գառնիի խեցեղենի
վրա պաակերված, Կվացխելներում և Ուրբնիսի քաղաքատեղիում հայտնա-
բերված մետաղե շրատեղիները իսկական խուազլուխ են և ունեն գուտ տեղա-
կան արմատներ։



Նկ. 74. Խեցու ռեկոր՝ Լրկղլխանի Թռչունի ռելիեֆ պատկերով։

Վրաստանում հայտնաբերվել է նման շրատեղիների և կախաղարդների մեկ
այլ տարրերակ ես, որի դեպքում ցողունի դիսիկր ավելի մասսիվ է և շրջա-
նտձև, իսկ պարույրները ռավականին փոքր²։

Իացի Գառնիից, խեցեղենի վրա մետաղե իրերի վերապատկերման մեկ
այլ օրինակի մենք հանդիպում ենք Կվացխելներում։ Այստեղ C1-3 շերտերում
հայտնաբերված խեցու ռեկորի վրա քանդակված է մետաղե դաշույն³։

Այսպիսով խեցեղենի դարդանախշերի շարքում մետաղե իրերի ձևերի
մոտքը հավասարում է վաղ բրոնզեդարում մետաղե տարատեսակ առարկա-
ների արտադրության ամուր հիմքերը, մյուս կողմից վեր է հանում նրանց
պաշտամունքային ատրիբուտները։

¹ А. Джавахишвили, Л. Глonti, Урбиниси, табл. XXXVI.

² Л. А. Чилашвили, Городище Урбиниси, Тб., 1964, рис. 4.

³ Б. А. Куфтин, Археологическая маршная экспедиция 1945 года в Юго-Осе-
тию и Имеретию, табл. LXXII. О. Джапаридзе, նշվ. աշխ., հ. 207, նկ. 448, Կվեմո-
Պարթիական միտոլոգիայի վրա պատկերված Օ. Ջափարիձեի և Ա. Ջավախիշվիլու ղեկավարու-
թյամբ Եսեու-Մյանի շրջանի (Շուլավերի) վաղ բրոնզեդարյան բնակատեղիի դամբարաննե-
րում հայտնաբերվել են նման շրատեղիներ։

⁴ А. Джавахишвили, Л. Глonti, նշվ. աշխ., աղ. IV, № 411:

Նոյազուլի շքասեղներն անշուշտ ունեցել են պաշտամունքային իմաստ՝ նրանց երևան գալը հավանաբար առնչվել է մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակի աճի հետ և շեշտել հատկապես խոյի, ոչխարի դերը նյութական բարիքների ստեղծման ասպարեղում:

Վաղ բրոնզեդարում խոյի պաշտամունքի լավագույն ապացույցներ են նաև Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված խոյազուլի մոնումենտալ արձանները և օջախի հենակները:

Նոյազուլի արձանների մասեր հայտնի են Շենդավթում¹: Վերջերս նման արձաններ պեղվել են Հառիճի վաղ բրոնզեդարյան սրբատեղիում², դտնվել է Ամասիայում³: Նոյազուլի օջախի հենակների լավագույն օրինակներից մեկը հայտնաբերվել է Շենդավթում⁴:

Այսպիսով, վաղ բրոնզեդարում եղան պաշտամունքի կողքին անասնապահության նոր ձևի, մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակի աճի պայմաններում, Հայկական լեռնաշխարհում մեծ նշանակություն է ստանում նաև խոյի պաշտամունքը:

Գառնիում հայտնաբերված դեղարվեստական խեցեղենի ունիֆ զարդանախշերի շարքում առանձին հետաքրքրություն են ներկայացնում եռանկյունաձև իրանով ոճավորված թռչունները:


Նման թռչուններով զարդարված խեցեղենի երկու օրինակ է հայտնաբերվել Գառնիում:

Սև փայլեցրած մակերեսով կավասաններից մեկի ուռուցիկ ուսերին պատկերված է ունիֆ երկգլխանի, եռանկյունաձև իրանով թռչուն (նկ. 74): Նրա երկու կողմից իրանի բարձրությամբ հավասարվող վիզը բավականին հաստ է: Գլուխներն ավարավում են սրվող կաուցով (№ 2234/123): Իրանից ցած պահպանվել են ուսերի հետքերը:

Գառնիում հայտնաբերված մեկ այլ նրբախեցի, սև փայլեցրած կավամանի ընկերի ուռուցիկ փորին պահպանվել է նման եռանկյունաձև իրանով թռչունի պատկերը, սակայն այն մեկգլխանի է, կատարված ոչ ունիֆ, այլ խորաքանդակ, դժային եղանակով (նկ. 46, № 2235/103): Ուսի ծավալներից և վիզի դիրքից զգացվում է, որ նախորդի նման այն ստատիկ վիճակում չէ, այլ շարժման մեջ է:

Եռանկյունաձև իրանով թռչունների զարդանկարը Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան խեցեղենի սամենասիրված մոտիվներից մեկն է: Նրանք պատկերված են տարբեր ձևերի կավասանների վրա. երևան են դալիս տարբեր զարդամոտիվների միջավայրում և արտահայտված են կատարման տարբեր եղանակներով:

Եռանկյունաձև իրանով թռչունի մենք հանդիպում ենք Արևիկի երկու տարբեր ձևի և տարբեր եղանակով կատարված զարդամոտիվների շարքում:



Նկ. 75. Գառնիում զարդանախշերով խեցու ընկեր Արևիկից:


¹ Է. Խաճադյան, Հայկական լեռնաշխարհի սյանություն... աղ. XVI, վերինը:

² Պեղումները Բ. Խաչատրյանի (1967 թ.):

³ Հայտնաբերվել է հողային աշխատանքների ժամանակ:

⁴ Է. Խաճադյան, նյս. աղ. XVI, ներքինը:

Այն սլաակերված է ներակված վզով, դուրս շեշտված նուրբ շուրթերով, ուռուցիկ իրանով և երկկոնիկ, շեշտված ներքնամասով թասի վրա (№ 2248/20), որի թև՝ վզին և թև՝ իրանին նուրբ դժային կետածածկ երկրաչափական ֆիգուրներ են սլաակերված և դրանց շարքում երկրաչափորեն արաաշալաված երկարավոր և երկարակտուց եռանկյունաձև իրանով թուղունը: (նկ. 75):



նկ. 76. Արծաթափայլ, թանազարդ գավաթ Արեւիկից:

Արեւիկի նրդախեցի, կատարման տեսակետից անթերի, բարձրարվեստ, արծաթափայլ դավաթի ուռուցիկ ուսերին ներձեկված զսւյգ փոսիկների շարքում այդ թուղունը սլատկերված է փայլաներկը հեռացնելու նդանակով (նկ. 76), որը պարզանախշմաս մի նոր ձև է. և դեռևս յուրահատուկ միայն Արեւիկին (№ 2289/91) և Գառնիին:

Մեծ ոճավորմամբ և զեղեցկությամբ է սլատկերված Կիրովականի զեղնադարչնադուլն փայլեցրած մակերեսով կարասի վզի բեկորի վրայի թուղունը (նկ. 77, № 1455դ), կոտարված ուլիսֆ-ներձկման նդանտկով:


Դժային նդանակով կաաարված եռանկյունաձև իրանով և պարուրաձև սվարսվող սղշով թուղուն սլատկերված է Ղարա-թափայլի օջախի հենակի վրա (№ 1461), նման թուղուն հանդիպում է նաև Գեղամա լեռների ժայռապաակերների շարքում¹:

Եռանկյունաձև իրանով թուղուններն իրենց արտահայտությունն են դտել

¹ Գեղամա լեռների ժայռապաակերները ուսումնասիրվում են Հ. Մարտիրոսյանի կողմից և դեռևս հրատարակված չեն:

նաև Շենգավթի գունաղարգ թտսի՝ և կառասների ղարգանախշերում (նկ. 78, 104)²:

Կոննուտի մեծ սափորներից մեկի վրա եռանկյունաձև իրանով ունիտի թռչունը գարձյալ ռազմագալար պարույրներով կազմված կոմպոզիցիայի կենտրոնն է ղրագեցնում: Թռչունի վզին կա երկժանի, որը հավոնաբար նրա երկակի բնույթն է շեշտում, նրա կապը երկրի և երկնքի հետ, գուցե և արաճայտում զույգ արևի սիմվոլը (նկ. 79):



Նկ. 77. Թռչնաղարղ խեցու բեկոր Կիրովականից:

Եռանկյունաձև իրանով թռչունների պատկերները Հայկական լեռնաշխարհի հյուսիսում հանգիստում են Օղնիում³ և Կիկեթում (որտեղ ունիտի նման թռչուն պատկերված է մեծ սափորի վզի երկու կողմում)⁴:

Օղնիում պաշտամունքային նշանակություն ունեցող թասերից մեկի վրա մի շարք այլ մոտիվների հետ, գծային եղանակով պատկերված է Գառնիի տիպի երկգլխանի կամ կրկնակի թռչուն: Բ. Կուֆտինը նրանցում աեսնում է հերոզլիֆիկ նշանագրեր⁵:

Գառնիի ունիտի երկգլխանի թռչունը, ինչպես կտեսնենք, գիշերվա և ցերեկվա հաջորդականություն, կամ էլ զույգ արև է խորհրդանշում:

Վերոհիշյալ եռանկյունաձև իրանով թռչունները իրենց այլ մանրամասներով հանգերձ, ինչպես հինգերորդ գլխում կտեսնենք, մի կողմից խորհրդանշել են արևի աստվածությունը, մյուս կողմից արաճայաել գիշերվա և ցերեկվա հաջորդականությունը, և որ ամենակարևորն է՝ կապվել են ջրի ու պաղարբրության աստվածության, վիշապի պաշտամունքի հետ:

Ավարտելով խեցեղենի ուսումնասիրությունը, ավելորդ չէ հիշաակել, որ Գառնիի նրբախեցի գեղակաղմ կավամանների մեծ մասին, հատկապես ներձկված փոսիկներով խմբին ընդորդ է արծաթափայլ մակերես: Նման խեցեղեն մեծ քանակությամբ հայանաբերվել է նաև Արևիկում, որը նույնպես աչքի է ընկնում իր կաաարելությամբ և ռաբձր ճաշակով:


¹ Մ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 187, աղ. LXV:

² Նույն աեղում, նկ. 40, էջ 179, աղ. LIII:

³ Б. А. Куфтин, «Урарт. աշխ.», էջ 33, նկ. 15:

⁴ Նույնի, Урартский колумбарий..., стр. 88:

⁵ Նույնի, Археологическая маршрутная экспедиция, 1945, стр. 33:



Արծաթափայլ մակերես ունեն նաև Կաոնուտի հաստախեցի կարասները (Խ. 1478/3, 8), Ֆանիկ-Յեփեի II շերտի նորախեցի կավամանները¹։

Սի յուրահատուկ հմալք ունի Թբիլիսից 70 կմ հարավ գտնված Բե-
ղենիկ փայտաշեն դամբարանի խեցեղենը բաղմահարուստ մետաղե իրերով, ոս-
կե թորոցով հանդերձ²։ Դամբարանբլուրի նրբախեցի, դեղակաղմ, արծաթափայլ
խեցեղենը կարծես մեապոլիսի խեցեղենի իմիտացիան լինի։ Այսպես հայտնաբեր-
վել են երկկոնիկ ներքնասասուվ ռաժակներ՝ պարզարված ղուղահենո խորաքան-
դակ ժուլպովներով, նրբադիծ երկրաչափական զարդանախշերի և կետազարդ
ժապավենների համադրությամբ, որոնք իրենց ղուղահեններն ունեն Թբիլի-
սիի XI և XII-VI դամբարանբլուրների խեցեղենում։ Այս հիասքանչ ժողովածուն
հարսաացնում են թեյնիկաձև կավա-
մանները, եռոտանի թասը՝ վերին մա-
սում նրբադիծ երկրաչափական դար-
դանախշերի դոախով, ղնկաձև իրանով,
խողովակաձև վզով կճուճները՝ ուսերը
պարզարված ուլիեֆ կիսադեղերի շա-
րանով, կամ ներճկված հորիզոնական
դոախների խմբերով և վերջապես երկ-
կոնիկ ներքնասասուվ փարչերը՝ ուժեղ
դուրս ճկված շուրթերով, իրանի կենա-
րոնում ներճկված փոսիկներով։ Բո-
լորն ունեն կանթեր, որոնք կարծես
պահպանել են կիսադեղաձև կանթի
հատկանիշները, սակայն նոր որակ
ունեն, նրբադեղ են, օղակաձև։

Բեղենիկի միենույն կավամանի
վրտ կարելի է ասենել տարաբանակ
զարդանախշերի՝ ակոսների, նրբադիծ
երկրաչափական պարզամոտիվների,
ուլիեֆ ելուսանների կեաաշար ժապա-
վենների համադրությամբ։

Այսպիսով, Բեղենիկի դամբարան-
բլուրը մթա III հազարամյակի բաղ-
մահարուստ խեցեղենի կարծես թե ամ-
փոփումը լինի, որանդ իրենց դեղարվեստական լուծումն են գտել կավաման-
ների ձևերը, կանթերը և բաղմահարուստ զարդանախշերը։

Ինչպես վերը ասանք, Գաոնիկի խեցեղենը բաղմաթիվ ղուղահեններ
ունի Հույկոյան լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան մշակույթում, ավելի
սերտորեն կապվում է Շենյավթի, էլարի, Կիրովականի և այլ հուշարձանների
խեցեղենի ու ժուլպերի հետ և համարյա չի առնչվում Շրեշ-բլուրի, Քյուլ-թա-
փայի խեցեղենի հետ։

Չնայած իր մի շարք ղուղահեններին, ինչպես վերը ասանք Գաո-
նիկի խեցեղենն ունի նաև ուրույն, լոկալ հատկանիշներ և իր որոշակի աեղն է



Նկ. 79. Կավամանի մաս, ուլիեֆ զար-
դանախշերով՝ Կաոնուտից։

¹ С. Burney, The Excavations at Janik-tepé, Azerbaijan, Iraq, v. XXIV, 1962, p. 246.

² Г. Ф. Гобеджишвили, Беденская гробница, Друзья памятников культуры, Сборник XII, Тбилиси, № 13—22.

բռնում Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան լուրօրինակ. բաղմահա-
րուսա խեցեղենի շարքում: Աղգակից ցեղերի տրոհման, տարաբնակեցման
պայմաններում լուրջ տարբերակների առկայությունը, որպիսին նկատվում
է Հայկական լեռնաշխարհում, բնական է:

Որոշ դուգաշեռներ հավաստում են նաև փոխանակային կապերի և մշա-
կութային փոխադրեցությունների գոյությունը կենտրոնական Անատոլիայի
և Կիլիկիայի հետ:

Գառնիում հայանաբերված խեցեղենը մեջ շերազրական տարբերու-
թյուններ անսնել դեռես հնարավոր չէ, սակայն ելնելով նրա հետ հայտնաբեր-
ված թվագրող նյութերից, խեցեղենի ամբողջ կոմպլեքսը ևս կարելի է թվա-
գրել մթա XXIV—XXI դարերով:

